



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 օգոստոսի 2020 թվականի N 1443 -Լ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻԶԻՆ ԶԵՂՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2020-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 2-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշման N 1 հավելվածի 240-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

ո բ ո շ ո ւ մ է.

1. Հաստատել՝

1) Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թվականների ոազ-
մավարությունը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թվականների
ոազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը՝ համա-
ձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ԱՎԻՆՅԱՆ

2020 թ. սեպտեմբերի 3
Երևան



Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
օգոստոսի 27-ի N 1443 - Լ որոշման

ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՌԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
2020-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



25 Սեպտեմբեր, 2020, Երևան

Բովանդակություն

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	2
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
1 ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ (COVID-19) ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՎՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՈՒԹՅՈՒՆԸ	4
2 ՓՄՁ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	7
3 ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ	9
3.1 ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ	9
4 ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	10
4.1 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԵՍՈՒՐՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄ	10
4.2 ՓՄՁ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿԱՐՈՒՊԻԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՁԵՌԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՄՃԱԿՈՒՅԹԻ ԽԹԱՆՈՒՄ	14
4.3 ՓՄՁ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ	17
4.4 ՓՄՁ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԻՆՍԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՆՊԱԱՍ ՄԻԶԱՎԱՅՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ	19
5 ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	22
ՀԱՎԵԼՎԱԾ 1 ՓՄՁ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	24
ՀԱՎԵԼՎԱԾ 2. SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	30
ՀԱՎԵԼՎԱԾ 3 ՀՀ ՓՄՁ ՄԻԶԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ԸՆՏ ՄԻԶԱՎԳԱՅԻՆ ՀԱՄԱՁԵՐԻ	31

Օգտագործվող հապավումներ

ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միության
ՏՀՀՀ (OECD)	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ԳՄՀՀ (GIZ)	Գերմանական միջազգային համագործակցության ընկերության
ՀԲ (WB)	Համաշխարհային բանկ
ԵՆԲ (EIB)	Եվրոպական ներդրումային բանկ
ԵՄ (EU)	Եվրոպական Միություն
ԻՀ (IC)	Ինտերնետ և հեռահաղորդակցում
ՆԱԿ	«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ
ՍԶ	Սոցիալան ձեռնարկատիրություն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՓԲԱ (SBA)	Փոքր Բիզնեսի Ակտ
ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ
ՄԿՈՒ	Մասնագիտական կրթություն և ուսում

Ներածություն

ՀՀ Կառավարությունը բարձր է գնահատում ՓՄՁ ներուժը Հայաստանի կայուն և ներառական աճի գործընթացում: Սույն ռազմավարությունը սահմանում է ՓՄՁ զարգացմանն ուղղված քաղաքականության շրջանակը, նպատակները, ակնկալվող արդյունքները և նախատեսվող միջոցառումները 2020-2024թթ. համար:

Ռազմավարությունն իրականացվելու է ըստ տարեկան գործողությունների ծրագրերի, իսկ դրա իրականացման համակարգման, մշտադիտարկման և գնահատման գործառությունների վերապահված է ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը:

Ռազմավարության նպատակն է նպաստել բարեփոխումներին ՓՄՁ մրցունակության բարձրացման համար առանցքային ոլորտներում, ինչպիսիք են կարգավորող և ինստիտուցիոնալ դաշտը, ուսուրսների, այդ թվում ֆինանսների հասանելիությունը, մարդկային կապիտալի զարգացումը, շուկաների հասանելիությունը, ձեռնարկատիրական մշակույթի զարգացումը: Կառավարության նպատակն է ձևավորել միջավայր, որը կնպաստի նորարարության ներթափանցմանը բոլոր ոլորտներում:

Ռազմավարության մշակման նպատակով ուսումնասիրվել են ներկա տնտեսական վիճակը, բիզնես և ինստիտուցիոնալ միջավայրերը, իիմնվելով այդ թվում ՏՀՀԿ (OECD) կողմից իրականացվող Եվրոպայի ՓԲԱ (SBA)-ի գնահատման արդյունքներին, ԵՄ (EU) ֆինանսավորմամբ՝ Հայկական բիզնես կոալիցայի կողմից իրականացված հետազոտության արդյունքներին, ինչպես նաև ԳՄՀՀ (GIZ) կողմից ֆինանսավորված ԸԴՎԱՅՀ (ADWISE) խորհրդատվական ընկերության կողմից իրականացված ՓՄՁ ռազմավարության գնահատման վերլուծությանը:

Ռազմավարության մշակման փուլում քննարկումներ են իրականացվել նաև պետական գերատեսչությունների, միջազգային և ՓՄՁ շահերը ներկայացնող հասարակական կառույցների, ՓՄՁ աջակցության ծրագրեր իրականացնող մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ, որը հնարավորություն է տվել բոլոր շահառուների կարիքների արտացոլման և բոլոր կողմերի ի թիվս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ջանքերի միասնականացմանը:

Ռազմավարությունը մշակվել է ԳՄՀՀ (GIZ) և ՏՀՀԿ (OECD) գործակցությամբ:

1 Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքները ՓՄՁ ոլորտի սուբյեկտների համար և դրանց հաղթահարման անհրաժեշտությունը

Կորոնավիրուսի (COVID-19) բռնկումը համաշխարհային տնտեսության մեջ առաջացրել է արտակարգ իրավիճակ և գլոբալ տնտեսական աճի դանդաղում, քանի որ առկա սահմանափակումները վնասում են տնտեսության արտահանմանն ուղղված արդյունաբերության և գյուղատնտեսության առանցքային ոլորտները, զբոսաշրջությանն ու հյուրանոցային տնտեսությանը: Կազմակերպությունները ճգնաժամի պատճառով բախվել են մի շարք խնդիրների, որոնցից են ինչպես աշխատողների աշխատավայրում լինելու հետ կապված սահմանափակումները և մատակարարման շղթաների խափանումները, այնպես էլ պահանջարկի անկումը՝ սպառողների վարքագծային փոփոխության և կառավարության կողմից կիրառվող սահմանափակումների հետևանքով: Չնայած այն հանգամանքին, որ նշված խնդիրները բնորոշ են թե՛ խոշոր, թե՛ փոքր և միջին ձեռնարկություններին, ճգնաժամը հատկապես ծանր է հարվածում ՓՄՁ ոլորտին, քանի որ վերջիններս սահմանափակ կարողություն ունեն դիմակայելու ցնցումներին, ունեն հաճախորդների և մատակարարման ցանցի անհամեմատ ավելի փոքր քանակ, կանխիկի փոքր պահուատներ և սահմանափակ վարկային տարբերակներ: ՓՄՁ-ները գերակշռում են այն ճյուղերում, որոնք առավելապես են տուժել ճգնաժամից, ինչպիսիք են տրանսպորտը, արտադրությունը, շինարարությունը, մեծածախ և մանրածախ առևտուրը, զբոսաշրջությունը, հյուրանոցային տնտեսությունը, մասնագիտական ծառայությունները և սպասարկման այլ ծառայությունները:

COVID-19- ի բռնկումը շարունակում է խափանումներ առաջացնել ՓՄՁ ոլորտի սուբյեկտների համար՝ հիմնարարութեն փոփոխով բիզնեսով զբաղվելու ձևը ներկայում և ապագայում: Ճգնաժամը հատուկ ընգծեց ներկայում ՓՄՁ ոլորտի սուբյեկտների գիտելիքների պակասը՝ բիզնեսի ղեկավարման, ֆինանսական գրագիտության, ճգնաժամային մարտահրավերներին դիմակայման և նոր միջավայրին հարմարեցման բնագավառներում՝ մատնանշելով ՓՄՁ-ների համար կարողությունների զարգացման ծրագրերի կենսական անհրաժեշտությունը: Որպեսզի գոյատևեն հատկապես փոքր և միջին ձեռնարկությունները, պետք է կարողանան իրենց գործառնությունները հարմարեցնել նոր միջավայրին, քանի որ ներկայում կայացված յուրաքանչյուր որոշում կարող է ազդել բիզնեսի՝ ոչ միայն աճի կարողության, այլև գոյության վրա: Անհրաժեշտ է արտակարգ ճկունություն, համակարգում և ունակություն դիմակայելու ճգնաժամային և հետճգնաժամային ցնցումներին, ինչը հնարավոր է միայն ՓՄՁ-ներին ճգնաժամի ընթացքում հմտությունների զարգացման հնարավորության և հասանելիության ապահովման միջոցով: Անհրաժեշտ է կրթել ՓՄՁ-ներին՝ օգնելու ձեռնարկել գործողություններ, որդեգրել նոր աշխատանքային գործընթացներ, արագացնել թվայնացումը և գտնել նոր շուկաներ: Նման քաղաքականությունները նպատակ ունեն լրիցելու հրատապ կարճաժամկետ մարտահրավերներ, սակայն նպաստում են նաև ՓՄՁ-ների կայունության ամրապնդմանը և աջակցում դրանց հետագա աճին:

Միևնույն ժամանակ, ձեռներեցությունը այլընտրանք է կորցրած աշխատանքի, արտագնա աշխատանքների հնարավորությունների սահմանփակման և տնտեսության տարաբնույթ ոլորտներում անձնակազմի կրճատումների պայմաններում: Հասարակության մոտ

ձեռներեցական հնարավորությունների շուրջ իրազեկման, ձեռներեցական ունակությունների զարգացումն այլևս ավելի քան իրատապ է:

Ճգնաժամը ցույց տվեց, որ անհրաժեշտ է վերանայել և վերակազմավորել կազմակերպությունների ներքին բիզնես գործընթացները՝ հնարավորության սահմաններում իրականացնելով հեռավոր աշխատանքային պայմանավորվածություններ, օգտագործելով տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, (հեռակոնֆերանսի ծրագրակազմը, ակնթարթային հաղորդագրությունների մատուցման ծառայությունները, ամպային (cloud-based) ֆայլերի փոխանակման համակարգերը, համատեղ աշխատանքային ծրագրերը և այլն): Եթե հեռավար աշխատանքային պայմանավորվածությունները հնարավոր չեն, ապա ձեռնարկությունները պետք է ընդունեն ողջամիտ նախազգուշական միջոցներ, որպեսզի աշխատատեղերը լինեն հիգիենիկ և անվտանգ, (օրինակ՝ աշխատատեղերը պարբերաբար մաքրելով, ձեռքի մաքրման և օճառի, ախտահանող միջոցների առկայություն ապահովելով) անձնակազմին հրահանգել խուսափել ձեռքսեղմումներից և պահպանել նվազագույն հեռավորություն, աշխատակիցների համար սահմանել ճկուն և հերթափոխային աշխատանքային ժամեր: Չնայած այդ միջոցները կարճաժամկետ հեռանկարում կարող են ներառել լրացուցիչ ծախսեր, դրանք հետագայում կնվազեցնեն փոքր բիզնեսի ծախսերը:

Նշված միջոցառումները առաջացնում են նաև << աշխատանքային օրենսգրքի համապատասխան ուսումնասիրության և ճկունության գնահատման անհրաժեշտություն: Ճգնաժամը ցույց տվեց ներկայիս օրենսգրքում առկա բացթողումները՝ հեռավար աշխատանքի կազմակերպման կարգի, պարապուրդի, արտակարգ իրավիճակներում աշխատողների վարձատրության և այլ դրույթների շուրջ: <աշվի առնելով, որ ճգնաժամային իրավիճակներում հնարավոր են որոշ կազմակերպությունների գործունեության տեսակների անորոշ ժամանակով դադարեցման դեպքեր, անհրաժեշտ է գործող օրենսդրությունը վերանայել ու նոր լուծումներ առաջարկել՝ խուսափելու կազմակերպությունների վրա անհավասար մեխանիզմների կիրառումից և լրացուցիչ բեռ սահմանելու դեպքերից:

COVID-19 ճգնաժամը ազդում է բոլորի վրա, բայց այն հարվածում է կանանց առավել ընդգծված ձևերով: ՓՄՁ-ներում կանայք և տղամարդիկ անհավասարաշափ են կենտրոնացած, թե՛ որպես աշխատող, թե՛ որպես բիզնեսի սեփականատերեր: <ետազոտությունները ցույց են տալիս, որ կանայք հաճախ աշխատում են պայմանագրային կամ ժամանակավոր հիմունքներով, ներգրավված են առավելապես ծառայությունների մատուցման ոլորտում և, հետևաբար, առաջիններից են, ով կորցնում է աշխատանքը ճգնաժամի պայմաններում: Կանանց կողմից դեկավարվող ՓՄՁ-ների պարագայում ճգնաժամին դիմացկունության պակասը սրվում է նրանց ֆինանսական ծառայությունների և ակտիվների ցածր տեղեկատվության, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) և բիզնես ցանցերի ավելի ցածր հասանելիության պատճառով, որոնք ավելի մատչելի են տղամարդկանց համար: <ետևաբար անհրաժեշտ է ապահովել, որ կանայք օգտվեն առկա կամ նոր հնարավորություններից՝ խրախուսական մեխանիզմների և հատուկ ուղղվածությամբ ծրագրերի անցկացման միջոցով առավելապես խթանել նրանց տնտեսական ակտիվությունը:

ՓՄՁ-ների և նրանց հետ փոխկապակցված կազմակերպությունների մոտ ճգնաժամի հետևանքով առաջացող ֆինանսական միջոցների անբավարարությունը կտրուկ ավելացնելու է մի շարքկազմակերպությունների գործունեության ժամանակավոր դադարեցման, ինչպես նաև՝ սննկացման դեպքերը: Անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել սնանկության գործնթացին վերաբերող օրենսդրական կարգավորումները և ինստիտուցիոնալ դաշտը, ՀՀ-ում և բարելավել սնանկության կանխարգելման պրակտիկան, ինչպես նաև տեսանելի դարձնել «երկրորդ հնարավորությամբ» ձեռնարկատիրությամբ զբաղվելու:

Ճգնաժամի հետևանքով առաջացած ապրանքների և ծառայությունների մատուցման նոր նրբությունները, ներկրվող հումքի հասանելիության բարդությունները հնարավորություն են ստեղծում փոքր ձեռնարկությունների համար արագ դիրքավորման՝ իմմնվելով իրենց ճկունության և արագ հարմարվելու ունակության վրա: Փոքր ձեռնարկությունները կարող են ապահովել իրենց դիրքերը շուկայում՝ ինտեգրվելով տարբեր արժեշեաններում երկարաժամկետ հեռանկար ապահովելով ոլորտին:

Այն գործողությունները, որոնք ձեռնարկվել են՝ ուղղված արտահանման խթանմանը, առկա խոչընդոտների բացահայտմանն ու չեզոքացմանը, ներառյալ տեխնիկական աջակցությունը, կարողությունների զարգացումը, օրենսդրական դաշտի ուսումնասիրությունները, այժմ ավելի կարևոր են, քան երբեմն: Ճգնաժամի պայմաններում առավել ընդգծվում են փոքր և միջին ձեռներեցների հնարավորությունների ապահովման անհրաժեշտությունը լուծելու այնպիսի բարդ խնդիրներ, ինչպիսիք են պայմանագրային պարտավորությունների կատարումը, նյութատեխնիկական ապահովումը, լոգիստիկան, ծավալային խնդիրները, շուկայի պահանջները և այլն:

Ճգնաժամը առավել ընդգծեց նաև ՓՄՁ վիճակագրական տվյալների հավաքագրման մանրամասնության ու որակի բարձրացման անհրաժեշտությունը՝ տնտեսական հետևանքների գնահատման, մոնիթորինգի և քաղաքականության մշակման բարելավման համար: ՓՄՁ-ները տնտեսական աճի, նորարարությունների, աշխատատեղերի ստեղծման և սոցիալական ինտեգրման ապահովման բանալին են հանդիսանում: Այնուամենայնիվ, պաշտոնական վիճակագրության մեջ ՓՄՁ-ները ներկայումս կարող են նույնականացվել միայն զբաղվածության չափի հետ՝ պարունակելով տվյալներ գրանցված կազմակերպությունների, շրջանառության, ոլորտների և աշխատակիցների թվաքանակի վերաբերյալ: Անհրաժեշտ գործողություններ է պետք ձեռնարկել բարելավելու պաշտոնական գործունեության վիճակագրությունը հավաքելու, ներդաշնակելու, վերլուծելու և ներկայացնելու կարողությունները՝ ՓՄՁ-ի կատարողականը չափելու համար:

2 ՓՄՁ ցուցանիշներ

ՓՄՁ Հայաստանի տնտեսության մրցունակության բարձրացման, ներառականության և կայուն զարգացման ապահովման կարևորագույն գործոններից է: <<Կառավարության 2019 թվականի ծրագրում մեծապես կարևորվում է ՓՄՁ զարգացումը, որը համարվում է ներառական տնտեսական աճի նախադրյալ:

2011 թվականին <<-ում ՓՄՁ սահմանումը աշխատողների միջին ցուցակային թվաքանակի մասով համապատասխանեցվեց Եվրամիության անդամ երկրներում գործող ՓՄՁ սահմանման հետ, որի համաձայն, ՓՄՁ սուբյեկտները վարչական նպատակներով դասակարգվում են ըստ ստորև ներկայացված չափանիշների:

Աղյուսակ 1Հայաստանում միկրո, փոքր և միջին կազմակերպությունների սահմանումը

աշխատողների միջին ցուցակային թվաքանակը	նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը	կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը
Գերփոքք	0-9	<100 միլիոն << դրամ
Փոքր	10-49	<500 միլիոն << դրամ
միջին	50-249	<1.5 մլրդ. << դրամ

2018թ.-ին «Աջակցություն ՓՄՁ Զարգացմանը Հայաստանում» ծրագրի շրջանակում, առաջին անգամ ԱՐՄՍՍԱՏ-ի կողմից պատրաստվել և հրապարակվել է «ՓՄՁ Հայաստանի Հանրապետությունում. 2018» տեղեկագիրը: Շարունակաբար 2019թ.-ին հրապարակվել են 2018թ-ը ամփոփող տեղեկագիրը, որի հիմնական ցուցանիշները ներկայացված են ստորև: Հրապարակման մեջ օգտագործվել է ՓՄՁ դասակարգումը բացառապես աշխատողների թվաքանակով որոշվող չափերով՝ համաձայն վիճակագրական նպատակներով ՓՄՁ դասակարգման համար կիրառվող միջազգայնորեն ընդունված չափորոշիչների:

2018 թվականին գերփոքք, փոքր և միջին կազմակերպությունների կողմից արտադրված ավելացված արժեքի կշիռը << ընդհանուր տնտեսության ՀՆԱ-ում կազմել է **23.6 տոկոս**:

Աղյուսակ 2 ՓՄՁ-ների կողմից 2018 թվականին ստեղծված ավելացված արժեքի մասնաբժինը ՀՆԱ-ում՝ ըստ ոլորտների

Առևտուր Ծառայություններ	Արդյունաբերություն	Շինարարություն
7.4 %	7.5%	5.4 %

Հատկանշական է, որ << կառավարության ծրագրում << տնտեսության և մասնավորապես, ՓՄՁ զարգացման համար կարևոր ոլորտ նախանշված զբոսաշրջության ոլորտի գլխավոր բաղադրիչ մաս կազմող կացության և հանրային սննդի կազմակերպման բաժնում ստեղծված ավելացված արժեքը 95.4 տոկոսը ստեղծվում է ՓՄՁ-ների կողմից:

2018 թվականին <<-ում գործող ՓՄՁ շրջանակի տնտեսավարողների քանակը կազմել է 68780, որից միայն 126-ն են (շուրջ 0.18 տոկոս) դասվել որպես խոշոր տնտեսավարողներ: ՓՄՁ-ների 52.1 տոկոսը գործունեություն են ծավալում Երևանում:

ՀՀ ՓՄՁ ոլորտի տնտեսավարողների մեկ վարձու աշխատողի հաշվով ստեղծված ավելացված արժեքը 2018թ. տարեկան կտրվածքով կազմել է շուրջ 6.66 մլն. ՀՀ դրամ (շուրջ 13.7 հազ. ԱՄՆ դոլար), խոշոր ընկերություններում այն կազմել է 9.55 մլն. ՀՀ դրամ (մոտ 19.7 հազ. ԱՄՆ դոլար): Ստորև այսուսակում ներկայացված են 2018թ. ՓՄՁ արտադրողականությունն ըստ ոլորտների՝

Այսուակ 3 ՓՄՁ արտադրողականությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ՏԳՏԴ խմբ.2) բաժինների

ՏԳՏԴ	1 աշխատողի տարեկան արտադրողականությունը՝ մլն. դրամ
Հանքագործական արդյունաբերություն	10.3
Մշակող արդյունաբերություն	5.9
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	15.8
Զրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	
Շինարարություն	11.3
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլներինորոգում	6.5
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	10.07
Կացության և հանրային սննդի կազմակերպում	3.86
Տեղեկատվություն և կաապ	7.34
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	6.97
Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	4.97
Վարչարարական և օժանդակ գործունեություն	4.22
Համակարգիչների, անձնական օգտագործման և կենցաղայինարտադրատեսակների նորոգում	4.3
Ընդամենը/միջին	6.6

Հայաստանում 1000 բնակչի հաշվով ՓՄՁ միջին խտությունը ցածր է և կազմում է 23.1: ՓՄՁ-ների կեսից ավելին գործունեություն են ծավալում Երևանում, որտեղ ՓՄՁ-ների խտությունը 1000 բնակչի հաշվով 33 է, իսկ մարզերում նույն ցուցանիշը զգալիորեն ցածր է: Երևանից դուրս գտնվող ՓՄՁ-ների մեջ աչքի է ընկնում Կոտայքի մարզը, որտեղ գտնվում է ՓՄՁ սուբյեկտների 8.6 տոկոսը, իսկ ՓՄՁ խտությունը 1000 բնակչի հաշվով 23.4 է:

2018 թվականին Հայաստանում 1000 բնակչին բաժին ընկնող ստեղծվող ընկերությունների թիվը կազմել է 9.8: Համաձայն ՀԲ (WB) զեկույցի բարձր-միջին եկամուտ ունեցող երկրներում այս ցուցանիշը հասնում է 30-ի: Այժմ ՀՀ ցուցանիշը համապատասխանում է ցածր-միջին եկամուտ ունեցող երկրների ցուցանիշին:

Ոլորտի և միջավայրի ավելի մանրամասն վերլուծությունը ներկայացված է Հավելված 1-ում, իսկ Ուժեղ/Ժողովական միջին ծեռնարկագրությունը՝ Հայաստանի Հանրապետությունում, 2019

3 Ուղղակիության տեսլականը և առաքելությունը

ՀՀ կառավարության կողմից ամրագրված ներառական տնտեսության զարգացման՝ կայուն զբաղվածության ապահովման և հասարակության միջին խավի ձևավորման մեջ կարևորագույն դեր են խաղում մրցունակ ՓՄՁ-երը:

Ուղղակիության տեսլականն է՝

Հայաստանի Հանրապետության ՓՄՁ-ները ունեն նորարարական գաղափարներ և գեխնոլոգիաները ընդունելու, ներդնելու և գեներացնելու բարձր ունակություն, միջազգայնորեն մրցունակ են և ներառված ինչպես գործածաշրջանային, այնպես և գլոբալ արժեշտաներում, իսկ մշակույթը, գործարար և ներդրումային միջավայրը նպաստում են ձեռներեցությամբ զբաղվելուն:

Ուղղակիության առաքելությունն է՝

նորարարական և մրցունակ ՓՄՁ-ների ձևավորման և աճի համար սրբեղծել բարենպաստ միջավայր:

3.1 Նպատակները և թիրախները

Ուղղակիությունը նպատակ է հետապնդում միջնաժամկետում նպաստել Հայաստանում ձեռներեցության զարգացմանը, ՓՄՁ-ների արտադրողականության բարձրացմանը, աջակցել ՓՄՁ-ների մրցունակության աճին, ներքին և միջազգային թիրախային շուկաներում՝ մասնավոր նախաձեռնողականության, առավել արտադրողական տեխնոլոգիաների ներդրման ու նորարարական գաղափարների ընդունման, ներդրման և գեներացման միջոցով:

Արդյունքում կապահովվի ՀՀ տնտեսության կայուն և ներառական զարգացմանը նպաստող նորարարական և մրցունակ ՓՄՁ-ների ձևավորումը և զարգացումը:

ՓՄՁ-ների արտադրողականության ավելացում: ՀՀ-ի ՓՄՁ-ների մեկ աշխատողի ստեղծած ավելացված արժեքը տարեկան կտրվածքով կազմում է 6.7 մլն. ՀՀ դրամ (մոտ 13.7 հազ. ԱՄՆ դոլար): Նշված ցուցանիշը գրեթե 2.5 անգամ զիշում է ՏՀՀԿ երկրների միջիններին: Նպատակ ունենալով բարձրացնել Հայաստանի ՓՄՁ-ների մրցունակությունը, այսինքն՝ կրճատել արտադրողականության ճեղքը, և ելնելով երկարաժամկետ տնտեսական աճի թիրախից (7% տարեկան իրական ՀՆԱ-ի աճ 2021 թվականի համար, 6.4% 2022 թվականի համար և 5.1% 2023 թվականի համար²⁾)՝ ուղղակիության համար որոշվել են հետևյալ թիրախները՝

Արդարողականության աճ՝ 2021-2023 թվերի համար միջինում գարեւեկան 3%, իսկ 2024 թվականիի համար 7.5%:

ՓՄՁ-ում զբաղվածների աճ՝ գարեւեկան միջինում 2.5 %:

Գլոբալ Ձեռնարկագրիության ցուցիչ (Global entrepreneurship index³) 40 (միավոր):

² Հայաստանի Հանրապետության 2021-2023 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր

³ 2018 թվականի գեկուցում Հայաստանը ունի 22.8 միավոր, զբաղեցնելով 88-րդ դիրքը

Արդյունքում, ռազմավարության գործողության ավարտին մեկ զբաղվածի կողմից, 2017 թվականին ստեղծված 8,1 մլն դրամ ստեղծված ավելացված արժեքի ցուցանիշը կազմելու է 12 մլն դրամ: Միաժամանակ այդ ժամանակահատվածում ՓՄՁ-ում ստեղծվելու է 23 հազար նոր աշխատատեղ: Հաջու առնելով **ՏՀՀԿ** երկրների արտադրողականության աճի ավելի ցածր տեմպերը՝ ակնկալվում է, որ արտադրողականության ճեղքը կնվազի մոտ 20%-ով: Ակնկալվում է, որ տվյալ աշխատատեղերը բաշխվելու են նորաստեղծ ընկերությունների և գործող աճող ընկերությունների միջև:

4 Հիմնական ուղղություններ և առաջնահերթ գործողություններ

ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի ուժեղացման, մրցունակության բարձրացման համար կարևորվել են հետևյալ ռազմավարական ուղղությունները՝

- 1) Ֆինանսական ռեսուրսների հասանելիության ավելացում
- 2) ՓՄՁ սուբյեկտների կարողությունների և ձեռնարկատիրական մշակույթի զարգացում
- 3) ՓՄՁ սուբյեկտների համար շուկաների հասանելիության ապահովում
- 4) ՓՄՁ զարգացման համար բարենպաստ ինստիտուցիոնալ և իրավական միջավայրի ապահովում

4.1 Ֆինանսական ռեսուրսների հասանելիության ավելացում

Համաձայն Եվրոպական Ներդրումային Բանկի Վարկավորման հետազոտության (2016թ.), ՓՄՁ-ների վարկավորման դժվարությունները կապված են մի շարք նշանակալի խոչընդոտների հետ, որոնք են՝ վարկունակությունը և/կամ լավ վարկային պատմության բացակայությունը, բիզնես պլան մշակելու կարողությունների պակասը (ֆինանսավորում պահանջող բիզնեսի կենսունակության և իրագործելիության պատշաճ ներկայացման դժվարություններ), համապատասխան գրավի բացակայություն (գրավի արժեքի համապատասխանություն, իրացվելիության աստիճան, գերադասելի է անշարժ գույք) և այլն:

Ըստ «ՓՄՁ ֆինանսական ֆորում» կենտրոնի տվյալների՝ Հայաստանում ՓՄՁ ֆինանսական միջոցների բացը **ՀՆԱ-ի** նկատմամբ կազմում է 10.84%, որը համեմատաբար ավելի ցածր է, քան տարածաշրջանի մնացած երկրների համապատասխան ցուցանիշը: Այդ կենտրոնի կողմից հաշվարկվող մեկ այլ ցուցանիշ՝ «ֆինանսապես սահմանափակված ընկերությունների մասնաբաժինը» Հայաստանի համար բավական բարձր է և կազմում է 37.26%⁴:

Համաձայն «SME Policy Index» 2020 թվականի համար արված վերլուծության՝ Հայաստանում ՓՄՁ-ների համար ֆինանսական միջոցների հասանելիությունը դեռ սահմանափակ է և բանկային ֆինանսավորումը շարունակում է լինել գերակշռող: Հայաստանին այդ գործակցի մասով տրվում է 3.81 միավոր՝ 5 հնարավորից⁵:

⁴<https://www.weforum.org/reports/the-inclusive-development-index-2018>

⁵ <https://ec.europa.eu/docsroom/documents/18721/attachments/1/translations/en/renditions/pdf>

Ըստ «Համաշխարհային մրցունակության համաթվի» 2019 թվականի հաշվետվության⁶ «ՓՄՁ ֆինանսավորում ենթահամաթվով 140 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է 52-րդ տեղը, իսկ «Ֆինանսական համակարգի կայունություն» և «Ֆինանսական համակարգի զարգացվածություն» ենթահամաթվերում համապատասխանաբար 56-րդ և 69-րդ հորիզոնականները:

Համաձայն ԵՆԲ 2016թ. վարկավորման հետազոտության գեկուցի, բանկերը հանդիսանում են ՓՄՁ ֆինանսավորման հիմնական աղբյուրը, իսկ ֆինանսավորումը հիմնականում իրականացվում է վարկերի միջոցով: Բացի այդ, ՓՄՁ-ների շրջանում ցածր է ժամանակակից ֆինանսական տեխնոլոգիաների և գործիքների առկայության և դրանց միջոցով ֆինանսների ներգրավման առանձնահատկությունների մասին տեղեկացվածության մակարդակը, ինչի արդյունքում չի ձևավորվում նման գործիքների նկատմամբ ակտիվ պահանջարկը: Ըստ էության բացակայում են նաև սփյուռքում առկա ֆինանսական ռեսուրսների՝ << տնտեսության մեջ ներգրավման պարզ, վստահելի և մատչելի մեխանիզմները: Ուստի, ՓՄՁ-ների շրջանում անհրաժեշտ է բարձրացնել և՝ ֆինանսական հաշվետվությունների որակը և՝ ֆինանսական հոսքերի կառավարման, այդ թվում՝ արտաքին ֆինանսավորման հնարավորությունների արդյունավետ կիրառության, հմտությունները:

Մյուս կողմից՝ Հայաստանում գործող սնանկության գործընթացի ցածր արդյունավետության հետևանքով ֆինանսական և այլ ակտիվներ ուղղվում են պարտքերի մարմանը, և ոչ կազմակերպության առողջացմանը:

Աղյուսակ 4 Ֆինանսների հասանելիության ավելացման ցուցիչներ

Զեկույց	Զափիչ	Երկրների թիվ	<< դիրքը	Գնահատական	Թիրախային միավոր
Ֆինանսների հասանելիություն					
SME Policy Index 2020	ՓՄՁ-ների ֆինանսավորման հասանելիություն	Ալֆ, 6	2	3.81	4.5
Համաշխարհային մրցունակության համաթիվ 2018	ՓՄՁ ֆինանսավորում	Աշխարհ 140	81		
	Ֆինանսական համակարգի զարգացվածություն	Աշխարհ 140	87		
	Վենչուրային կապիտալի հասանելիություն	Աշխարհ 140	72		
SME Finance forum 2018	Միկրո և ՓՄՁ ֆինանսական բաց ՀՆԱ-ի նկատմամբ	Ալֆ, 6	6	10.84%	8%
	Նույն չափի կազմակերպությունների մեջ ֆինանսական սահմանափակություն ունեցողների տոկոս	Ալֆ, 6	3	37.26%	20%

⁶<http://reports.weforum.org/global-competitiveness-report-2018/competitiveness-rankings/>

Առաջնահերթ գործողություն 1: ՓՄՁ Պետական աջակցության գործիքակազմի արդյունավետության և ծածկույթի ընդլայնում՝ օգտագործելով համագործակցության բոլոր հնարավորությունները

Աջակցության ներկա գործիքակազմը⁷ հնարավորություն է ընձեռում մարզերում գործող ՓՄՁ-ներին մասնակի լուծել գրավի հետ կապված խնդիրները և ստեղծել ավելացված արժեք իրենց համայնքի, մարզի և հանրապետության մասշտաբով: Պետական քաղաքականությունը կարևորում է ՓՄՁ-ի դերը հատկապես մարզերում տնտեսական ակտիվության բարձրացման համար: Կառավարությունը մտադիր է ավելացնել վարկային երաշխավորությունների առկա դրամագլուխը, ինչպես միջազգային գործընկերների հետ համատեղ իրականացվող ծրագրերի այնպես և պետական բյուջեի միջոցներով, բացի այդ անհրաժեշտ է գնահատել Սփյուռքի ներկայացուցիչների և հայաստանյան ՓՄՁ-ների կապ ստեղծելու գործում պետական աջակցության կառուցի հնարավոր դերակատարումը:

Միաժամանակ՝ աշխատելով ֆինանսական շուկայի սուբյեկտների հետ, մշակվելու են ոիսկերի բաշխման սխեմաներ, ինչի արդյունքում մեկ միավոր երաշխավորության դիմաց բանկի կողմից տրամադրվելու է 4 միավոր վարկ, ներկայումս 1:1 հարաբերակցության փոխարեն: Այլ կերպ ասած, ավելացվելու է դրամագլխի միջոցների երաշխավորությամբ տրամադրվող վարկերի ծավալը և ծրագրերի գնահատման արդյունավետությունը, քանի որ ծրագիրը գնահատվելու է և՛ բանկի և՛ պետական աջակցության մարմնի կողմից: Մյուս կողմից նախատեսվում է ընդլայնել աջակցության ծրագրերի գործիքակազմը՝ ներդնելով նորարությունը թիրախավորող ֆինանսական գործիք:

Առաջնահերթ գործողություն 2: Անշարժ գույքին այլընտրանքային գրավի կիրառությանը առնչվող օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի զարգացում

ՀՀ կառավարությունը մտադիր է վերլուծել շուկայում առկա այլընտրանքային գրավով ապահովված վարկերի և ֆինանսական այլ գործիքների (ակտիվների հիմքով ֆինանսավորում՝ ֆակտորինգ, լիզինգ, դրամական հոսքեր) կիրառության հնարավորությունները և խոչընդոտները ու համագործակցելով շահագրգիռ կողմերի հետ մշակել բարեփոխումների օրակարգ, որը կներառի և՛ ֆինանսական հաստատությունների աշխատակիցների կարողությունների բարձրացման, և՛ օրենսդրական համապատասխան փոփոխությունների փաթեթ և՛ ՓՄՁ-ների շրջանում իրազեկվածության ավելացում: Արդյունքում ակնկալվում է ՓՄՁ-ի կողմից նշված ֆինանսական գործիքների կիրառության ավելացում, այդ թվում լիզինգային գործարքների պորտֆելի աճ՝ 50%:

Առաջնահերթ գործողություն 3: Ֆինանսական գրագիտության բարձրացում և թափանցիկ գործարարության մշակույթի զարգացում

Այս նպատակով կառավարությունը մտադիր է տեղեկատվական արշավ իրականացնել՝ ուղղված թափանցիկ գործելատմի և կորպորատիվ կառավարման խթանմանը և նախատեսել տեխնիկական կարողությունների բարձրացմանն ուղղված կրթական ծրագրեր: Մյուս կողմից

⁷ «Ներդրումների աջակցման կենտրոն հիմնադրամի» միջոցով իրականացվում է սկսակ գործարարներին և ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում միջոցով գրավադրման խնդրին

անհրաժեշտ է նվազեցնել «օրինապահ» և «ստանդարտներին» համապատասխան հաշվառում իրականացնելու ծախսերը բիզնեսի համար: Դրա շրջանակներում կառավարությունը դիտարկելու է SS լուծումների օգտագործման խրախուսման հնարավորությունները և իրականացնելու է համապատասխան կրթական ծրագրեր:

Բացի այդ կարևորվելու է ֆինանսական ոլորտի աշխատակիցների և տեխնոլոգիական կարողությունների ավելացումը՝ ՓՄՁ-ների գնահատման կարողությունների զարգացմանն ուղված:

Արդյունքում ակնկալվում է ֆինանսական հաստատությունների կողմից գնահատվող ոիսկի մակարդակի նվազում և ներդրումային ֆոնդերի գործունեության ակտիվացում ՓՄՁ-ի ծրագրերում:

Առաջնահերթ գործողություն 4: Ֆինանսական շուկայի դիվերսիֆիկացիայի համար բարենպատ պայմանների ստեղծում՝ ներդրումային/վենչուրային հիմնադրամներ, բիզնես-հրեշտակներ, այլընտրանքային ֆինանսավորման գործիքներ

Կառավարությունը մտադիր է գնահատել ՓՄՁ համար այլընտրանքային ֆինանսավորման (բաժնեմասնակցային, զանգվածային (crowdfunding), վենչուրային) հասանելիությունը, վերհանել և վերացնել առկա օրենսդրական բացերը և խոչընդոտները, իրականացնել իրազեկման բարձրացմանն ուղղված արշավ և, անհրաժեշտության դեպքում, մշակել այլընտրանքային միջոցների ներգրավման մեխանիզմ (մասնավորապես՝ սփյուռքից) կամ աջակցել այդպիսի մեխանիզմի կայացմանը: Մասնավորապես՝ << կառավարությունը նախատեսում է աջակցել ՓՄՁ ուղղվածություն ունեցող ներդրումային ֆոնդերի կայացմանը՝ վերացնելով օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի խոչընդոտները և առավելագույնս օգտագործելով համագործակցության հնարավորությունները:

ՓՄՁ ուղղվածություն ունեցող համապատասխան տեխնոլոգիաների տիրապետող ներդրումային ֆոնդերի մուտքը << շուկա կնպաստի առկա ֆինանսավորման բացի կրճատմանը և ձեռնարկատիրական մշակույթի զարգացմանը:

Առաջնահերթ գործողություն 5: Սնանկության համակարգի բարեփոխում

Կառավարությունը մտադիր է համապարփակ ուսումնասիրել սնանկության գործընթացին վերաբերող օրենսդրական կարգավորումները և ինստիտուցիոնալ դաշտը <<-ում և բոլոր շահագործի կողմերի հետ համատեղ մշակել փոփոխությունների ցանկ՝ նպատակ ունենալով պարզեցնել և արագացնել առկա գործընթացը, ամրապնդել վարկատուների իրավունքները, բարձրացնել միջոցների վերականգնման մակարդակը, բարելավել սնանկության կանխարգելման պրակտիկան, ինչպես նաև տեսանելի դարձնել «Երկրորդ հնարավորությամբ» ձեռնարկատիրությամբ գրադարձը:

Արդյունքում ակնկալվում է նվազեցնել ոչ արդյունավետ ակտիվներում սառեցված ֆինանսական միջոցների ծավալը, և ֆինանսական համակարգի կողմից գնահատվող ոիսկի մակարդակը: Կարևորվում է արդյունավետ սնանկության գործընթացների շնորհիվ հեռանկար ունեցող կազմակերպությունների համար կիրառել պարտքի վերակառուցման մեխանիզմներ:

4.2 ՓՄՁ սուբյեկտների կարողությունների զարգացում և ձեռնարկատիրական մշակույթի խթանում

Մրցունակ ՓՄՁ-ների ստեղծման և զարգացման համար առանցքային է տեխնիկական և մարդկային կարողությունների առկայությունը: Սակայն ՓՄՁ-ների զգալի մասը կարիք ունի կարողությունների զարգացման, մասնավորապես՝ նոր մոտեցումների և տեխնոլոգիաների, շուկայավարման, հաշվապահական հաշվառման, ռազմավարական պլանավորման և ֆինանսական կառավարման, ձեռնարկատիրական անհրաժեշտ կրթության:

Պետական քաղաքականության հիմնական շեշտը դրվելու է ՓՄՁ-ներում տեխնոլոգիական բացը հնարավորինս նվազեցնելու, ՓՄՁ-ների՝ տեխնոլոգիաների ներդրման և կիրառման կարողությունների բարձրացման վրա:

ՓՄՁ-ներում նորարարությունը խթանելու նպատակով առաջին հերթին անհրաժեշտ է իրենց շրջանում բարձրացնել ստեղծվող արժեքի և մրցունակության բարձրացման համար նորարարության կարևորության վերաբերյալ իրազեկությունը և որոշակիորեն խրախուսել նորարարության նկատմամբ պահանջարկը: Այդ թվում՝ կարևորվելու է Էներգաարդյունավետության բարձրացմանը նպաստող նախագծերի իրագործումը:

Համաձայն 2019 թվականի Համաշխարհային տնտեսական ֆորումի հաշվետվության՝ Հայաստանն ունի բավականին նպաստավոր դիրք Համաշխարհային մրցունակության համաթվի «ԻՀ տեխնոլոգիաների ընդունում» չափորոշիչով՝ զբաղեցնելով 59-րդ տեղը: Սակայն իր դիրքով հետ է մնում հարևան Վրաստանից (55-րդ տեղ), Մոլդովայից (48-րդ տեղ) և Ղազախստանից (44-րդ տեղ): «Նորարարական կարողություններ» ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է 62-րդ տեղը՝ առաջ անցնելով իր երկու հարևաններից (Վրաստան՝ 91-րդ տեղ և Ադրբեյջան՝ 68-րդ տեղ):

Չնայած միջին մասնագիտական կրթության ոլորտում ընթացող բարեփոխումներին, աշխատանքի շուկայում դեռևս անհամապատասխանություն կա առկա աշխատուժի և պահանջված հմտությունների միջև:

Աղյուսակ 5 ՓՄՁ սուբյեկտների կարողությունների զարգացում և ձեռնարկագիրական մշակույթի խթանում ուղղության ցուցիչների համակարգ

Զեկույց	Ուղղություն	Երկրների թիվ	ՀՀ դիրքը	Միավոր	Թիրախ միավոր
Կարողությունների զարգացում և ձեռնարկատիրական մշակույթ					
SME Policy Index 2020	Ձեռնարկատիրական ուսումնառություն և կանանց ձեռներեցություն	ԱլԳ, 6	2	2.84	4
	Ձեռնարկատիրական հմտություններ	ԱլԳ, 6	3	3.36	4.5

	Նորարարություն	ԱլԳ, 6	1	2.96	3.5
Համաշխարհային մրցունակության համաթիվ 2018	Ինովացիացիոն և կապի տեխնոլոգիաներ	Աշխարհ 140	56		
	Հմտություններ	Աշխարհ 140	55		
	Աշխատաշուկայի զարգավածություն	Աշխարհ 140	33		
	Բիզնես դինամիկա	Աշխարհ 140	62		
	Զեռնարկատիրական մշակույթ	Աշխարհ 140	61		

Առաջնահերթ գործողություն 1: Նորարարության ներդնումը և կիրառումը թիրախավորող աջակցության գործիքի մշակում և ներդնում պետական աջակցության կառուցների միջոցով

Կառավարությունը մտադիր է բարելավել ՓՄՁ-ներին տրամադրվող աջակցության թիրախավորումը՝ նպատակ ունենալով աջակցել արտադրողականության ավելացմանը նպաստող նորարական ծրագրերի իրագործմանը: Մասնավորապես իրագործվելու են միասնական օգտագործման տեխնոլոգիական կենտրոնների հիմնման ծրագրեր, նորարարության առողջիւթի և խորհրդատվության աջակցության միջոցառումներ, նորարարության կիրառումը խորախուառող ծրագրեր:

Առաջնահերթ գործողություն 2: ՓՄՁ ոլորտում գործող հանրային կառուցների և բիզնեսի զարգացման ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնում՝ ՓՄՁ-ում կարողությունների բացը լրացնելու ուղղությամբ:

Մատչելի և որակյալ խորհրդատվական ծառայությունները կարող են էականորեն կրճատել ՓՄՁ-ների համար վարկերի ներգրավման տրանզակցիոն ծախսերը, բարձրացնել կառավարման մակարդակը, խթանել նորարարության կիրառումը՝ արդյունքում ավելացնելով ընկերությունների մրցունակությունը: Կառավարությունը մշակելու է խորհրդատունների և մենթորների հարթակ գործարկելու մեխանիզմ, որտեղ ներգրավված կլինեն Հայաստանի և Սփյուռքի փորձառու մասնագետները, այդ հարթակի միջոցով ներուժ ունեցող ՓՄՁ-ները կստանան աճի իմպուլս:

Առաջնահերթ գործողություն 3: Զեռնարկատերերի և ՓՄՁ-ում գրաղվաճների որակավորման բարձրացմանն ուղղված միջավայրի կայացում

Կառավարությունը մտադիր է իրականացնել աշխատուժի կարողությունների պահանջարկի գնահատում ՓՄՁ-ներում և ստացված տեղեկությունների հիման վրա գործարար միջավայրի ներկայացուցիչների հետ համատեղ մշակել կրթական հաստատությունների (մասնավորապես՝ ՄԿՈՒ) կրթական ծրագրեր և դասընթացներ:

Միաժամանակ, հիմք ընդունելով ՓՄՁ-ներում առկա տեխնիկական գիտելիքի պահանջարկը՝ կառավարությունը աջակցելու է լավագույն փորձագետների ներգրավմանը՝ համապատասխան կարողությունների զարգացման, փորձի փոխանակման նպատակներով: Մշակվելու է «Զեռնարկատիրություն» կրթական ծրագիրը, որը լայնորեն հասանելի կդարձվի ԲՈՒՀ-երում, վերապատրաստման կենտրոններում և այլն:

Առաջնահերթ գործողություն 4: ՓՄՁ-ի կողմից գիտության, տեղեկատվական տեխնոլոգիաների և տեխնոլոգիական լուծումների նկատմամբ պահանջարկի խրախուսման ծրագրի մշակում և իրագործում

Կառավարությունը մտադիր է խթանել ՓՄՁ-ների պահանջների բավարարմանը ուղղված նորարական գաղափարները և աջակցել գիտական ոլորտի, SS ընկերությունների և ՓՄՁ-ների միջև կապերի ամրապնդմանը, այդ թվում տեխնոպարկերի ռեսուրսների օգտագործմամբ:

Անհրաժեշտ է բարձրացնել իրազեկվածության մակարդակը ՓՄՁ-ներում SS և ավտոմատացման լուծումների, «կանաչ» տեխնոլոգիաների, Հորիզոն 2020 և այլ ծրագրերի կողմից ընձեռնվող հնարավորությունների վերաբերյալ, խրախուսել ՓՄՁ-ներում նման ծրագրերը և աջակցել որանց իրականացման համար անհրաժեշտ կարողությունների ձևավորմանը:

ՀՀ կառավարությունը նպատակ ունի SS համայնքի հետ համատեղ աջակցել ՓՄՁ-ներում SS և ավտոմատացման լուծումների մասին տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը և աջակցել սկսնակ ձեռներեցների կողմից համապատասխան լուծումների կիրառությանը առաջին քայլեր կատարելիս:

Հաշվի առնելով փոքր կազմակերպության համար տեխնոլոգիայի ներմուծման դժվարությունը կառավարությունը իրականացնելու է ռեսուրսների, գիտահետազոտական և տեխնոլոգիական ենթակառուցվածքների համատեղ օգտագործման, ինկուբատորների և կլաստերների ձևավորման ծրագրեր:

Առաջնահերթ գործողություն 5: Ձեռնարկատիրական մշակույթի զարգացում

Կառավարությունը կրթական համակարգի բոլոր մակարդակներում նպատակ է ունենալու տեսանելի դարձնել ձեռներեցությունը շրջանավարտներին՝ որպես կարիերայի տեսակ, նպաստել ձեռներեցին հատուկ մտածողության և հատկանիշների զարգացմանը (առաջնորդություն, պատասխանատվություն, պրոակտիվություն, ռիսկի դիմելու պատրաստակամություն և այլն), նպաստել աշակերտների/ուսանողների ձեռնարկատիրական հմտությունների զարգացմանը (թիմային աշխատանք, հաղորդակցություն և ներկայացման հմտություններ, ծրագրերի կառավարում, ժամանակի կառավարում և այլն):

Բնակչության լայն շրջանում ձեռներեցությամբ գրավելը խթանելու նպատակով Կառավարությունը շարունակելու է հանրայնացնել «Հաջողակ գործարարների» պատմությունները և իրականացնել սկսնակ ձեռնարկատերերի համար հնարավոր աջակցության ծրագրերի տեսանելիության և մատչելիության բարձրացման միջոցառումներ: Մյուս կողմից անհրաժեշտ է ավելացնել հասանելի, ոչ ֆորմալ կրթության և մասնագիտական վերապատրաստումների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը ՓՄՁ շրջանում և բարձրացնել շարունակական կրթության մշակույթը և որակը:

Հաշվի առնելով սկսնակ ձեռնարկատերերի շրջանում կանանց⁸ և երիտասարդների համեմատաբար ցածր ներկայացվածությունը՝ կարևորվելու է թիրախավորված

⁸Համաձայն «Հայաստանում Աշխատաշուկայի երիտասարդակենտրոն և գեներացզայուն հետազոտության» 2018 ձեռնարկատերերի 29,6% տոկոսն է իգական սեռի

միջոցառումների իրականացումը՝ ուղղված կանանց և երիտասարդության շրջանում ձեռներեցության ավելացմանը՝ հատկապես մարզերում: Այն ներառելու է իրազեկման, ուսուցողական, մենթորների ներգրավման միջոցառումներ: Կարևորվելու է հայրենադարձների ինտեգրումը երկրի ձեռնարկատիրական համայնքում:

Առաջնահերթ գործողություն 6: Սոցիալական ձեռնարկատիրության տեսանելիության բարձրացում

Կառավարությունը մտադրված է բարձրացնել իրազեկվածությունը սոցիալական ձեռնարկատիրության վերաբերյալ բոլոր շահագրգիռ կողմերի մոտ, ինչպես նաև ստեղծել ցանց միջազգային կազմակերպությունների, ՍԶ սուբյեկտների, հասարակական կազմակերպությունների միջև:

Տվյալ ռազմավարությունը կարևորում է սոցիալական կազմակերպություններում արտադրողականության ավելացումը, իրենց ֆինանսական կայունությունը, ինչի նպատակով իրականացվելու է կարողությունների և հմտությունների բարձրացման ծրագիր:

Զուգահեռաբար ուսումնասիրելու և լրամշակվելու են օրենսդրական բացերը և խոչընդոտները ՍԶ զարգացման համար:

4.3 ՓՄՁ սուբյեկտների համար շուկաների հասանելիության ապահովում

Շուկաների հասանելիությունը թույլ է տալիս կազմակերպություններին աճել՝ օգտագործելով իրենց առավելագույն կարողությունները, այսինքն բարձրացնելով արտադրողականությունը՝ հասնել մրցունակ և կայուն դիրքի: Հաշվի առնելով, որ Հայաստանն ունի փոքր ներքին շուկա ուստի որպես քաղաքականության հիմնական առաջնահեռթություն, կարևորվում է արտահանման հաշվին տնտեսական աճի ապահովումը:

Անհրաժեշտ է նշել, որ ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհի շատ երկրներում արտահանման գործարքներում ՓՄՁ-ներն ունեն թույլ դերակատարում, ինչը պայմանավորված է ՓՄՁ-ներին բնորոշ մի շարք խնդիրներով, մասնավորապես՝

- արտաքին շուկաներում ՓՄՁ-ների արտադրանքի ցածր մրցունակությունը՝ որակի համապատասխան ստանդարտներին չբավարարելու պատճառով
- ՓՄՁ-ների համար արդյունավետ մարքեթինգի և լոգիստիկայի իրագործման խնդիրներ
- արտաքին շուկաների վերաբերյալ տեղեկատվության պակաս
- արտաքին շուկաների համար ՓՄՁ-ների արտադրանքի ոչ բավարար ծավալ, կանոնավոր մատակարարումներ իրականացնելու դժվարություն

Աղյուսակ 6 ՓՄՁ-ների շուկաների հասանելիության ցուցանիշներ

Շուկաների հասանելիություն					
Զեկույց	Ուղղություն	Երկրների թիվ	ՀՀ դիրքը	Միավոր	Թիրախային միավոր
SME Policy Index 2020	ՓՄՁ-ների միջազգայնացում	Ագ, 6	2	2.86	3.5

Առաջնահերթ գործողություն 1: Շարունակական աջակցություն ՓՄՁ-ներին նոր շուկաներ մուտք գործելիս

Կառավարությունը մտադիր է բարձրացնել ՓՄՁ-ների համար արտահանման և ներմուծման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը և մատչելիությունը, ինչպես նաև իրականացնել արտաքին շուկաներում առկա հնարավորությունների (գործող առևտրային ռեժիմների և շուկաների վերաբերյալ տեղեկատվություն) և ռիսկերի վերաբերյալ ՓՄՁ շրջանում տեղեկատվության տարածման աշխատանքներ:

Առաջնահերթ գործողություն 2: Արտաքին շուկաներում ՓՄՁ-ների տեսանելիության բարձրացում՝ առևտրի և ներդրումների խթանման նպատակով

ՀՀ կառավարությունը ուղղակիորեն աջակցելու է հայկական ՓՄՁ-ների արտաքին շուկաներում ներկայացվածության բարձրացմանը: Այս նպատակով, բացի արդեն գործող աջակցության գործիքներից, այն է՝ աջակցություն ցուցահանդեսներին և գործարար համաժողովներին մասնակցությանը, կառավարությունը մտադիր է մասնավոր հատվածի հետ քննարկել գործիքակազմի, ինչպես նաև դրա ավելի նպատակային թիրախավորման հնարավորությունները և մշակել համապատասխան գործողությունների ծրագիր:

Կառավարությունը լայնորեն աջակցելու է ՓՄՁ-ների թվային ներկայացվածությանը առևտրային հարթակներում:

Առաջնահերթ գործողություն 3: Թիրախային շուկաների բացահայտման և պահանջներին համապատասխանեցման գործընթացի աջակցություն

Կառավարությունը մտադիր է աջակցել հայկական ՓՄՁ-ներին արտաքին շուկաներում առկա պահանջները հատկորոշելու և դրանց համապատասխանությունը ապահովելու և ապացուցելու գործում: Այս առումով կառավարությունը մշակելու է համապատասխան գործիքների և քայլերի փաթեթ, որը կներկայացնի մասնավոր հատվածի քննարկմանը:

Առաջնահերթ գործողություն 4: Լոգիստիկ/պահեստային տնտեսությունների կայացում

Կառավարությունը մտադիր է մշակել գործիքակազմ, որը կաջացի ՀՀ-ում ՓՄՁ-ներին լոգիստիկ, պահեստային և այլ հարակից ծառայություններ մատուցող լոգիստիկ/արտահանման կենտրոնների կայացմանը:

Առաջնահերթ գործողություն 5: Էլեկտրոնային առևտրի ընդլայնման համար նպաստավոր միջավայրի ձևավորում

Այս գործողության շրջանակներում կառավարությունը մտադիր է ուսումնասիրել վճարային համակարգերի և փոստային ծառայությունների շուկան, անհրաժեշտության դեպքում մշակել ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների օրակարգ: Ի լրումն մշակվելու է ձեռնարկ համաշխարհային և տարածաշրջանային էլեկտրոնային հարթակներում արտադրանքի վաճառքի բոլոր փուլերի վերաբերյալ, ինչպես նաև խթանվելու է մարզերում գործող ՓՄՁ-ների արտադրանքի էլեկտրոնային վաճառքը հանրապետության տարածքում:

Առաջնահերթ գործողություն 6: Խթանել ՓՄՁ-ների մասնակցությունը պետական գնումներին

Կառավարությունը մտադիր է բարձրացնել պետական գնումների և դրանց ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը ՓՄՁ-ի համար և դիտարկել

ՓՄՁ-ի համար վարչական խոշընդոտների վերացման հնարավորությունը, ինչպես նաև վեր հանել ԵԱՏՄ անդամ երկրների պետական գնումներին հայկական ընկերությունների մասնակցության հնարավորությունները:

Առաջնահերթ գործողություն 7: Նպաստել ՓՄՁ-ների ինտեգրմանը խոշոր կազմակերպությունների արժեքի շղթայում

Զարգացած տնտեսություններում աճի և զարգացման անհրաժեշտ նախապայման է ՓՄՁ-ների ընդգրկումը խոշոր կազմակերպությունների արժեքային շղթաներում: Ուսումնասիրվելու են խոշոր և փոքր ընկերությունների համագործակցության խոշընդոտները և մշակվելու է բարեփոխումների օրակարգ:

Կառավարությունը նպատակ ունի կապող օլակ հանդիսանալ խոշոր կազմակերպությունների, արտահանողների և տեղական ՓՄՁ-ներ համագործակցության կայացման համար: ՓՄՁ-ներին պետք է ցուցաբերվի աջակցություն խոշոր կազմակերպությունների պահանջները հասկանալու և շուկայում տեսանելիության բարձրացման հարցում: Ավելին, անհրաժեշտ է խրախուսել ՓՄՁ-ների միավորումը, քանի որ դրանց առանձնացված կարողությունները կարող են բավարար չհնել մեծ շուկաներում անհատական գործունեության համար:

4.4 ՓՄՁ զարգացման համար ինստիտուցիոնալ և իրավական բարենպաստ միջավայրի ապահովում

Ինստիտուցիոնալ բարենպաստ միջավայրի ապահովում

ՀՀ կառավարությունը նախատեսում է ՓՄՁ զարգացմանը նպաստող էկոհամակարգի բարելավման ուղղությամբ իրականացնել համապարփակ միջոցառումներ՝ հիմքում դնելով պետական, մասնավոր և միջազգային կազմակերպությունների կամ ծրագրերի շրջանակներում ՓՄՁ աջակցությանն ուղղված ծրագրեր իրականացնող կառույցների աշխատանքի ներդաշնակեցումը: Կառավարությունը կնպաստի պետական, այդ թվում՝ տարածքային մակարդակում գործող, կառույցների կարողությունների զարգացմանը, գործառույթների և դրանց կողմից առաջարկվող պրոդուկտների դիվերսիֆիկացմանը, հատկապես այն ոլորտներում, որոնք պահանջված են ՓՄՁ-ների կողմից, սակայն չեն իրականացվում կամ իրականացվում են մասամբ՝ մասնավոր և/կամ միջազգային կառույցների կողմից:

Պրոդուկտների/ծառայությունների մշակման ընթացքում հիմնական սկզբունքները կլինեն դրանց հասանելիությունը ՓՄՁ-ների լայն շրջանակներին, հատկապես մարզերում, հիմնականում ծառայությունների թվայնացման հաշվին՝ պահելով շահառուների հետ շարունակական արդյունավետ երկխոսություն:

Նպատակ ունենալով խրախուսել երկրի բնակչության ստեղծարար կարողությունների ներդրումը նորաստեղծ կազմակերպություններում՝ կառավարությունը ներդնելու է «մեկ պատուհան» ընթացակարգը, որը կմիավորի խորհրդատվական, ֆինանսական, ինչպես նաև մենթորների ծառայությունները:

Առանձնահատուկ ուշադրություն կդարձվի վիճակագրական տվյալների որակի և մատչելիության բարձրացմանը՝ հաշվի առնելով դրանց կարևորությունը ինչպես

Կառավարության համար արդյունավետ քաղաքականության մշակման, այնպես էլ ՓՄՁ-ների համար՝ իրենց գործունեությանն առնչվող որոշումներ կայացնելու տեսանկյուններից:

Աղյուսակ 7 Ինսպիրուցիչնալ և իրավական բարենպաստ միջավայրի ցուցիչների համակարգ

Ինստիտուցիչնալ և օրենսդրական միջավայր					
Զեկույց	Ուղղություն	Երկրների թիվ	ՀՀ դիրքը	Միավոր	Թիրախային միավոր
SME Policy Index 2020	Սնանկություն և երկրորդ հնարավորություն	Ալֆ, 6	1	2.4	3.5
	ՓՄՁ քաղաքականության մշակման ինստիտուցիչնալ կարգավորման շրջանակ	Ալֆ, 6	3	3.76	4.5
	Գործարար միջավայր ՓՄՁ-ների համար	Ալֆ, 6	3	3.57	4.5
	Աջակցության ծառայություններ	Ալֆ, 6	1	4	4.5
	Պետական գնումներ	Ալֆ, 6	2	3.61	4
	Ստանդարտներ և տեխնիկական կարգավորումներ	Ալֆ, 6	4	2.66	3.5
	ՓՄՁ-ները «կանաչ» տնտեսության մեջ	Ալֆ, 6	2	2.4	3

Առաջնահերթ գործողություն 1: Մասնավոր-պետություն երկխոսության մեխանիզմների կայացում և կիրառություն:

Կառավարությունը մտադիր է կայացնել մասնավոր-պետություն երկխոսության մի շարք մեխանիզմներ, որոնց թվին է դասվելու ՓՄՁ խորհրդի նոր աշխատակարգը, առցանց հարթակները: Կառավարությունը մտադիր է նաև մասնավոր հատվածի հետ քննարկել հնարավոր այլ մեթոդներով հետադարձ կապի հաստատումը և մշակել համապատասխան լուծումների փաթեթ: Արդյունքում ՓՄՁ-ին առնչվող պետական քաղաքականությունը կիրագործի «Սկզբից մտածիր փոքրի մասին» («Think Small First») սկզբունքը: Այս գործողության իրականացման ճանապարհին կարևորվելու է բիզնես անդամակցության վրա հիմնված կազմակերպությունների դերի բարձրացումը:

Առաջնահերթ գործողություն 2: Պետական աջակցության կառուցների կարողությունների զարգացում և նրանց գործունեության արդյունավետության և թափանցիկության բարձրացում՝ կորպորատիվ կառավարման, հաշվետվողականության մեխանիզմների ներդրմամբ:

Կառավարությունը մտադիր է զգալիորեն հզորացնել ՓՄՁ աջակցություն տրամադրող կառուցներում առկա մարդկային և ֆինանսական կարողությունները՝ հետևյալ հիմնական ուղղություններով՝

- սկսնակ ձեռներեցներին պատշաճ աջակցության տրամադրում՝ ինտեգրված «մեկ պատուիան» գործընթացում
- ձեռներեցների թիրախային խմբերի (սոցիալական ձեռնարկատիրության սուբյեկտներ, նորարարական ծրագրեր, արտահանման ուղղված ծրագրեր) աջակցության պրոդուկտների մշակում և ներդնում

- գործող ՓՄՁ-ների մոտ ծագող հարցերի և խնդիրներին արձագանքման համար անհրաժեշտ կարողությունների զարգացում

Առաջնահերթ գործողություն 3: Վիճակագրության բարելավում

Քաղաքականության և ռազմավարության որակը բարելավելու նպատակով կառավարությունը մտադիր է զգալիորեն բարելավել ՓՄՁ վերաբերյալ առկա վիճակագրությունը և վերլուծական արդյունքը: Այս նպատակին հասնելու համար նախատեսվում է իրականացնել պարբերական հարցումներ, առկա խնդիրների վերհանման և հետադարձ կապի ապահովման նպատակով, էականորեն բարելավել պաշտոնական վիճակագրությունը, օպերատիվ տեղեկությունների հավաքագրման մեխանիզմները, ինչպես նաև ապահովել << ֆինանսական սեկտորում ՓՄՁ-ի վարկերի վերաբերյալ քանակական և որակական տեղեկատվության առկայությունը:

Մյուս կողմից ՓՄՁ-ներին ռազմավարական որոշումների համար կարևոր է տնտեսական, ժողովրդագրական և այլ վիճակագրական տվյալների մատչելիությունը և որակը, ինչի համար շահագրգիռ կողմերին անհրաժեշտ է ներգրավել ԱՐՄՍՏԱՏ-ի աշխատանքային ծրագրերի մշակմանը, ինչպես նաև դիտարկել տեղեկատվության հավաքագրման և տարածման այլնուրանքային եղանակները:

Առաջնահերթ գործողություն 4: ՓՄՁ-ի աջակցության ոլորտում ծրագրեր իրականացնող դոնորների աշխատանքի համակարգում:

Կառավարությունը սերտորեն և ակտիվորեն կիամագործակցի միջազգային հանրության հետ՝ ռեսուրսների մոբիլիզացման արդյունավետ գործընթաց հիմնելու համար: Այն կոչված է լինելու ապահովել միջազգային դոնոր համայնքի միջոցներով պետական ֆինանսավորման լրացումը ժամանակին և միասնական մոտեցմամբ: Ռեսուրսների մոբիլիզացման գործընթացն առաջնորդվելու է ՓՄՁ ռազմավարությամբ և դրա հիման վրա մշակված գործողությունների ծրագրերով: Գործող ծրագրերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը պետք է հասանելի դառնա «մեկ պատուհան» համակարգի շրջանակներում:

Իրավական բարենպաստ միջավայրի ապահովում

Զնայած ընդհանուր բարենպաստ մթնոլորտին՝ գործարար միջավայրը ձևավորող օրենսդրությունն ունի շարունակական բարելավման անհրաժեշտություն:

Ստեղծված տնտեսական իրողությունների պայմաններում անհրաժեշտ է վերանայել որոշ կարգավորումներ, որոնց դեպքում ՓՄՁ սուբյեկտները ունենում են զարգացման լուրջ դժվարություններ: Այդ դժվարությունների հաղթահարման համար սույն ռազմավարությամբ նախատեսված գործողությունները կիրականացվեն հետևյալ մի քանի ուղղությամբ:

Առաջնահերթ գործողություն 1: ՓՄՁ ազդեցության գնահատման մեխանիզմների մշակում և գործադրում

Կառավարությունը մտադիր է մշակել ՓՄՁ կարգավորման ազդեցության գնահատման մեխանիզմներ: Նման մեխանիզմի առկայությունը թույլ կտա վերհանել գործող կամ առաջարկվող կարգավորումների ազդեցությունը ՓՄՁ համայնքի տեսանկյունից և քննարկման առարկա դարձնել առավել խնդրահարուց կարգավորումները:

Առաջնահերթ գործողություն 2: Հարկային/մաքսային/այլ վարչարարական բեռի գնահատում և պարզեցում ՓՄՁ-ների համար

Կառավարությունը մտադիր է իրականացնել վարչարարական բեռի խորքային գնահատում, վեր հանել բեռի առաջացման հիմքերը, մասնավոր հատվածի հետ քննարկումների արդյունքում մշակել հնարավոր լուծումների փաթեթ և փոխադարձ համաձայնությամբ իրականացնել առավել բարձր ազդեցություն ունեցող լուծումները:

5 Ռազմավարության իրականացման ընթացքի նկատմամբ մոնիթորինգ, գնահատում և հաշվետվողականություն

ՓՄՁ զարգացման ռազմավարության իրականացումը բնութագրվում է նախատեսված միջոցառումների և գործողությունների բազմաբովանդակությամբ և ծավալով, ինչը պահանջում է ներգրավված պատասխանատու մարմինների օպերատիվ հաշվետվողականության կազմակերպում և համակարգում: Մեկ այլ կարևոր սկզբունք է՝ ՓՄՁ հանրության ներկայացուցիչների հետ շարունակական երկխոսությունը:

Ռազմավարության իրականացման մոնիթորինգի նպատակով գործողությունների իրականացման համար պատասխանատու կամ համակատարող մարմինները եռամսյակային պարբերականությամբ հաշվետվություններ կտրամադրեն սույն ռազմավարության իրականացման համար պատասխանատու լիազոր մարմնին՝ << Էկոնոմիկայի նախարարությանը: Վերջինս կիրականացնի ընթացիկ մոնիթորինգ, որը ենթադրում է.

- Գործողությունների ծրագրով նախատեսված կետերի կատարման ամբողջականության գնահատում,
- Հավելված 1 -ում ամփոփած ցուցանիշներով արձանագրված արդյունքների գնահատում,
- Առանձին գործողությունների չկատարման պատճառների վերհանում,
- ՓՄՁ ոլորտի օպերատիվ վիճակագրության և հետադարձ կապի հիման վրա միտումների դուրս բերում և վերլուծություն,
- Ռազմավարությանը կից մշակվելու է ՓՄՁ ոլորտին առնչվող միջազգային համաթվերի մատրիցա, որը կարտացոլի յուրաքանչյուրի մասով Կառավարության երկարաժամկետ թիրախը
- Վերոնշյալի հիման վրա գործողությունների ծրագրի ճշգրտում անհրաժեշտության դեպքում:

Վերոնշյալի արդյունքում կկազմվեն համապատասխան ընթացիկ հաշվետվություններ, վերլուծական տեղեկանքներ և առաջարկություններ, որոնք, ըստ անհրաժեշտության կընսարկվեն ՓՄՁ զարգացման ենթախորհրդի, կամ ՓՄՁ զարգացման խորհրդի նիստում, որտեղ կիրավիրվեն նաև գործողության կատարման համար պատասխանատու գերատեսչության պաշտոնյաներ:

Հաշվետու տարվան հաջորդող տարվա սկզբին լիազոր մարմինը կկազմի հաշվետվություն, որտեղ արտացոլված կլինեն նախատեսված և փաստացի թիրախային ցուցանիշների շեղումները, գործողությունների կատարման կարգավիճակը: Հաշվետվությանը զուգահեռ կձևավորվի տարեկան գործողությունների հաջորդ ծրագրի նախագիծը և, ըստ անհրաժեշտության, կկատարվի ռեսուրսների վերանայում:

Հաշվետվությունը և տարեկան գործողությունների հաջորդ ծրագրի նախագիծը կքննարկվեն ՓՄՁ զարգացման Ենթախորհրդում, ըստ անհրաժեշտության, նաև Խորհրդում, կիրապարակվեն նաև << Էկոնոմիկայի նախարարության կայքում և e-draft համակարգում, այնուհետև սահմանված կարգով կներկայացվեն << վարչապետի աշխատակազմ:

Հավելված 1 ՓՄՁ հիմնական տնտեսական ցուցանիշներ

Գծապատկեր 1 Տնտեսավարողների քանակի կառուցվածքն ըստ <<մարզերի և Երևան քաղաքի Աղբյուր՝ ԱՐՄՍՍԱՏ ՓՄՁ Հայաստանի Հանրապետությունում 2019թ.՝

Աղյուսակ 8 Տնտեսավարողների քանակն ըստ դնդեսական գործունեության դեսակների դասակարգչի բաժինների ու դնդեսավարողների չափերի, 2018թ.

ՏԳՏԴ խմբ.2	Ընդամենը (+խոշոր)	այդ թվում		
		գերիշոր	փոքր	միջին
Բ. Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	314	267	35	5
С. Մշակող արդյունաբերություն	6 741	5 837	691	167
Д. Էլեկտրականության, գազի, գոլորշումավորակօդիմատակարարում	249	132	107	4
Ե. Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	83	63	17	-
Ֆ. Շինարարություն	1 517	1 120	313	75
Գ. Մեծածախ և մանրածախ առևտուր. Ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	44 093	42 940	998	133
Ի. Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	1 739	1 489	205	34
Լ. Կացությանն հանրային սննդի կազմակերպում	4 053	3 444	532	72
Ջ. Տեղեկատվություններ	2 161	1 817	288	45
Լ. Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	1 764	1 647	109	11
Մ. Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	3 607	3 369	208	29
Ն. Վարչարական և օժանդակություններ	1 971	1 747	171	48
Տ. Սպասարկման այժմառայլություններ. Համակարգիչների, անձնական օգտագործման և ներառական արդարադատության նորոգում	488	475	12	1
Ընդամենը	68 780	64 344	3 686	515

Աղյուր՝ ԱՐՄՍՍԱՏ ՓՄՁ Հայաստանի Հանրապետությունում 2019թ.

Աղյուսակ 9Համախառն ավելացված արժեքի մասնաբաժնը ՀՆԱ-ում ըստ դնդեսական գործունեության դեսակների դասակարգչի բաժինների ու դնդեսավարողների չափերի, 2018թ.

ՏԳՏԴ խմբ.2	Ընդամենը (+խոշոր)	այդ թվում	
		գերիշոր, փոքր	միջին
Բ. Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	2.8	0.2	0.1
С. Մշակող արդյունաբերություն	8.8	2.4	1.9
Д. Էլեկտրականության, գազի, գոլորշում և լավորակ օդի մատակարարում	3.6	0.4	0.4
Ե. Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	0.3	0.0	-
Ֆ. Շինարարություն	3.5	1.9	1.4

ՏԳՏՆ խմբ.2	Ընդամենը (+իսշոր)	այդ թվում	ՏԳՏՆ խմբ.2
		գերիշոր, փոքր	միջին
G. Մեծածախ և մանրածախ առևտուր. ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	9.8	5.8	1.6
H. Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	3.0	1.0	0.6
I.Կացության և հանրային սննդի կազմակերպում	1.7	1.0	0.6
J. Տեղեկատվություն և կապ	3.2	1.1	0.6
L. Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	0.7	0.6	0.1
M. Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	1.0	0.8	0.2
N. Վարչարարական և օժանդակ գործունեություն	0.9	0.6	0.2
S95. Համակարգիչների, անձնական օգտագործման և կենցաղային արտադրատեսակների նորոգում	0.1	0.1	0.0
Ընդամենը	39.4	15.9	7.7


Աղյուր՝ ԱՐՄՍՍԱՏ ՓՄՁ Հայաստանի Հանրապետությունում 2019թ.

Աղյուսակ 10ՓՄՁ-ների թիվն ու խպությունը 1000 բնակչի հաշվով ըստ մարզերի


Մարզ	Բնակչության թիվը՝ (հազ. մարդ)	ՓՄՁ- ների թիվ	ՓՄՁ խտություն 1000 բնակչի հաշվով	ՓՄՁ-ների քանակն ընդհանուրի մեջ (տոկոս)
Երևան	1081.8	35662	33.0	51.9%
Արագածոտն	125.4	1780	14.2	2.6%
Արարատ	256.7	4223	16.5	6.2%
Արմավիր	263.9	3943	14.9	5.7%
Գեղարքունիք	228.3	2763	12.1	4.0%
Լոռի	215.5	4254	19.7	6.2%
Կոտայք	251.6	5890	23.4	8.6%
Շիրակ	233.3	3235	13.9	4.7%
Սյունիք	137.6	3176	23.1	4.6%
Վայոց ձոր	49	1227	25.0	1.8%
Տավուշ	122.2	2501	20.5	3.6%
Ընդամենը	2965.3	68654	23.15	100%

Աղյուր՝ ԱՐՄՍՍԱՏ ՓՄՁ Հայաստանի Հանրապետությունում 2019թ.

Գծապատկեր 2Վարձու աշխաբողների թվաքանակն ըստ S4S7 խմբ.2 բաժինների ու դնդեսավարողների չափերի, 2018թ.



Գծապատկեր 3Կազմակերպությունների գրաղվածության, շրջանառության և արդադրության քանակները՝ ըստ չափերի



Աղյուր՝ Հայաստանի 2018թ. ՓՄՁ ցուցանիշների SՀՀԿ ժողովածու


Գծապատկեր 4ՓՄՁ-ների համար ֆինանսների հասանելիությունը պահպան խոչընդու



- Բարդ ընթացակարգեր
- Տոկոսադրույթներ
- Հաստատման հույս չունեն
- UJL
- Գրավի ապահովման միջոց
- Հաստատման հույս չունեն


Աղյուր՝ ԳՄՁՎՀ/BEEPS հետազոտություն

Գծապատկեր 5 Խնդիրներ, որոնք սահմանափակում են վարկավորման հասանելիությունը ՓՄՁ-ների համար (պակաս կարևոր-խիստ կարևոր)




Աղյուր՝ ԳՄՁՎՀ/BEEPS հետազոտություն

Գծապատկեր 6 Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ <<մարզերի և Երևան քաղաքի ու ՓՄՁ գյուղեսավարողների չափերի, 2018թ.



Աղյուր՝ ԱՐՄՍՏԱՏ ՓՄՁ Հայաստանի Հանրապետությունում 2019թ.

Գծապատկեր 7Նոր սպեհծված դրվեսավարողների քանակի կառուցվածքն ըստ << մարզերի և Երևան քաղաքի ու դրվեսավարողների չափերի




Աղյուր՝ ԱՐՄԱՍԱՏ ՓՄՁ Հայաստանի Հանրապետությունում 2019թ.

Աղյուսակ 11 Տնտեսավարողների կողմից արդադրված ապրանքների ու մարդուցված ծառայությունների ծավալը (շրջանառությունը) ըստ << մարզերի և Երևան քաղաքի ու դրվեսավարողների չափերի, 2018թ.

Ընդամենը		այդ թվում			
		գերմիքը		փոքր	միջին
		ընդամենը	որից՝ վարձու աշխատող չունեցողներ		
Երևան	4 595 431.6	913 438.5	92 934.3	922 931.1	1 062 323.7
Արագածոտն	48 338.5	21 956.1	5 153.9	11 307.0	15 075.5
Արարատ	272 202.6	56 009.9	14 537.9	45 343.8	20 553.3
Արմավիր	136 114.1	55 744.7	13 921.1	34 638.0	17 788.6
Գեղարքունիք	51 008.3	31 363.4	7 766.7	16 077.2	937.4
Լոռի	129 028.5	45 085.0	10 474.6	24 767.8	13 539.3
Կոտայք	429 096.7	183 918.0	17 171.3	76 590.0	94 190.5
Շիրակ	85 617.0	38 911.8	7 447.8	21 984.5	20 332.9
Սյունիք	363 529.4	38 339.7	7 492.0	28 895.7	37 264.7
Վայոց ձոր	32 954.0	12 785.0	2 902.0	8 822.4	2 906.9
Տավուշ	54 116.4	31 816.6	5 461.6	10 928.4	8 310.4
Ընդամենը	6 197 437.1	1 429 368.7	185 263.2	1 202 285.9	1 293 223.2

Աղյուր՝ ԱՐՄԱՆԻԱՆ ՓՄՁ Հայաստանի Հանրապետությունում 2019թ.

Գծապատկեր 8Վարձու աշխատողների թվաքանակի կառուցվածքն ըստ << մարզերի և Երևան քաղաքի ու լոնգինսավարողների չափերի, 2018թ.



Աղյուր՝ ԱՐՄԱՆԻԱՆ ՓՄՁ Հայաստանի Հանրապետությունում 2019թ.

Հավելված 2. SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> Կազմակերպություն գրանցելու արագ ընթացակարգ ՓՄՁ-ների կարգավորման բարենպաստ դաշտ Կառավարության կողմից ՓՄՁ աջակցության գործիքակազմի առկայություն Կապի և ինտերնետի զարգացած ենթակառուցվածք և բարձր որակ, նորարարական և կապի տեխնոլոգիաների հասանելիություն Մի շարք էլեկտրոնային հարթակների առկայություն (e-draft, e-gov) և շարունակական ընդլայնում Զարգացած Այ-Թեր ոլորտ ՓՄՁ-ի համար պարզ հարկային ռեժիմի առկայություն 	<ul style="list-style-type: none"> Գործարար կարողությունների ցածր մակարդակ և փորձի պակաս Թույլ զարգացած ենթակառուցվածքներ, հատկապես մարզերում Ցածր արտադրողականություն Ֆինանսների ցածր հասանելիություն Հարկային և մաքսային վարչարարություն Որակյալ կաղողերի սակավություն, աշխատուժի հետ իրավական հարաբերությունների բարդություն Արտաքին շուկաների վերաբերյալ տեղեկացվածության ցածր մակարդակ Լոգիստիկ խնդիրներով պայմանավորված արտահանման/ներմուծման բարդություններ Խորհրդատվական ծառայությունների բարձր գին ՓՄՁ-ների համար Կազմակերպության փակման ընթացակարգի բարդություն ՓՄՁ-ների կենտրոնացում Երևանում Ընկերությունների սնանկության գործընթացի անարդյունավետություն Աջակցության գործիքակազմի վերաբերյալ տնտեսավարողների տեղեկացվածության ցածր մակարդակ
<h3>Հնարավորություններ</h3> <ul style="list-style-type: none"> Այլընտրանքային ֆինանսավորման մեխանիզմների զարգացում Առկա բարենպաստ առևտարային ռեժիմների արդյունավետ օգտագործում, կառուցների առկայություն ՓՄՁ-ների համար խորհրդատվական ծառայությունների և աջակցող կառուցների առկայություն Էլեկտրոնային առևտի զարգացում Պետություն-մասնավոր հատված երկխոսության կայացում Կրթական համակարգի շուկայի պահանջներին համապատասխանեցում Տեխնոլոգիաների և նորարար գաղափարների ներմուծում Օժանդակող ենթակառուցվածքների/գործիքների արդյունավետ շահագործում Անդամակցության վրա հիմնված կազմակերպությունների դերի բարձրացումը ԵԱՏՏ և ԵՄ շուկաների բարձր հասանելիություն, ազատ առևտի համաձայնագրեր GSP+ և REX համակարգերին անդամակցություն, օն-լայն հայտարարագրման համակարգ 	<h3>Ոիսկեր</h3> <ul style="list-style-type: none"> Արտաքին անբարենպաստ պայմանների ի հայտ գալը (Փինանսական ճգնաժամ, հիմնական գործընկեր երկրներում աճի դանդաղում, արտաքիչության ռիսկեր և այլ) Լրացուցիչ լոգիստիկ խնդիրներով պայմանավորված մրցունակության անկում Տարածաշրջանում աշխարհաքաղաքական անկայունություն ՓՄՁ-ների կողմից արտահանման և տեխնոլոգիաների ընդունման և ներդրման անբավարար մակարդակ Արտագաղթի հետևանքով կրճատվող աշխատուժ Նորարարությանը դիմադրող բիզնես միջավայր

Հավելված 3 ՀՀ ՓՄՁ միջավայրի գնահատումն ըստ միջազգային համաթվերի

Զեկույց	Ուղղություն	Երկրների թիվ	ՀՀ դիրքը	Միավոր	Բնութագիր	Կարճ նկարագիր
Ֆինանսական միջոցների հասանելիություն						
SME Policy Index 2020	ՓՄՁ-ների ֆինանսավորման հասանելիություն	ԱլԳ, 6	2	3.81/5	Ալտերնատիվ ֆինանսավորման գործիքները սակայ են և դժվար հասանելի, բանկային վարկավորման պայմանները ոչ միշտ են մատչելի, հատկապես գրավի մասով: Դրական է գնահատվում երաշխիքային աջակցության ծրագրերի առկայությունը: Որպես խնդիր նշվում է նաև ֆինանսական գրագիտության ոչ բավարար մակարդակը:	Ներառում է բանկային ֆինանսների հասանելիությունը, պահանջները, առաջարկվող գործիքների բազմազնությունը, ֆինանսական գրագիտության մակարդակը: Գնահատվում է միջազգային այլ համարթերի և հարցումների արդյունքում:
Համաշխարհային մրցունակության համարթիվ 2018	ՓՄՁ ֆինանսավորում	Աշխարհ 141	52	51.8/100	Նախորդ տարվա համեմատ՝ զգալիորեն բարելավվել է ՀՀ դիրքը՝ բարձրանալով 81-րդից: ԱլԳ երկրների շարքում ՀՀ-ն զիջում է միայն Ադրբեյջանին:	Հարցում: որքան՞վ է հեշտ երկրում ՓՄՁ-ների համար իրենց անհրաժեշտ ֆինանսների ներգրավումը:
	Ֆինանսական համակարգի կայունություն	Աշխարհ 141	56	89.9/100	Նախորդ տարվա համեմատ՝ զգալիորեն բարելավվել է ՀՀ դիրքը՝ բարձրանալով 68-րդից: ԱլԳ երկրների շարքում ՀՀ-ն առաջինն է:	Բանկային համակարգի կայունության, լիկիդայնության, վարկային պորտֆելի դրսերման և վարկային բացի միջինացված գնահատական:
	Ֆինանսական համակարգի զարգացվածություն	Աշխարհ 141	69	60.2/100	Նախորդ տարվա համեմատ՝ զգալիորեն բարելավվել է ՀՀ դիրքը՝ բարձրանալով 87-րդից: ԱլԳ երկրների շարքում ՀՀ-ն առաջինն է:	Ֆինանսական ենթահամարթերի միջինացված գնահատական:
	Վենչուրային կապիտալի հասանելիություն	Աշխարհ 141	56	38.5/100	Նախորդ տարվա համեմատ՝ զգալիորեն բարելավվել է ՀՀ դիրքը՝ բարձրանալով 72-րդից: ԱլԳ երկրների շարքում ՀՀ-ն զիջում է միայն Ադրբեյջանին:	Հարցում: ինովացիոն և բարձր ոփեկային սրարտ-ակ-երը որքան վենչուրային ֆինանսավորում կարող են ստանալ:
	Բանկային համակարգի կայունություն	Աշխարհ 141	65	69.4/100	Նախորդ տարվա համեմատ՝ ՀՀ դիրքը բարելավվել է տասը կետու: ԱլԳ երկրների շարքում ՀՀ-ն առաջինն է:	Հարցում: որքան՞վ եք բանկային համակարգը համարում կայուն:
	Վարկային բաց	Աշխարհ 141	4	-1.20%	Վարկային բացի մակարդակի առումով ԱլԳ երկրների շարքում ՀՀ-ն զիջում է միայն Վրաստանին:	Վարկ-ՀՆԱ տոկոսային հարաբերություն:
SME Finance forum 2018	ՀՆԱ-յի համեմատ միկրո և ՓՄՁ ֆինանսական բաց	ԱլԳ, 6	6	10.84%	Տարածաշրջանի երկրների համեմատ Հայաստանում բացը համարվում է ամենափոքրը, ական ֆինանսների հասանելիության տեսանկյունից կա մեծ տարբերություն կանանց և տղամարդկանց միջև (հօգուտ տղամարդկանց):	ՓՄՁ-ների ֆինանսական միջոցների պահանջարկի և ֆինանսական ինստիտուտների կողմից ֆինանսների առաջարկի բացասական տարբերություն:
	Նոյն մեծության կազմակերպությունների մեջ ֆինանսական սահմանափակումներ ունեցողներ	ԱլԳ, 6	3	37.26%	Այս համարվով ՀՀ-ն միջին տեղում է: Սահմանափակումը պայմանավորված է կամ վարկային ոչ ձեռնտու պայմաններով, կամ մերժում ստանալու հանգամանքով:	Այս կազմակերպություններնը, որոնք կամ դիմել են բանկ վարկավորման համար և մերժում ստացել, կամ չեն դիմել վարկային պայմանների՝ իրենց ոչ ձեռնտու լինելու պատճառով:
Հմտություններ և ձեռնարկատիրական մշակույթ						

SME Policy Index 2020	Ձեռնարկատիրական ուսումնառություն և կանանց ձեռներեցություն	ԱլԳ, 6	2	2.84/5	Դրական են գնահատվում ձեռներեցությունը դպրոցական ծրագրում ներառելու, ինչպես նաև պետական աջակցություն ստացող այլ ծրագրերը: Առաջարկվում է առավել ուշադրություն դարձնել միջազգային փորձի փոխանակմանը:	Ներառում է կարգավորումների առկայությունը, իրականացումը, դասընթացների արդյունավետությունը, պետության կողմից լրացնից օժանդակությունը:
	Ձեռնարկատիրական հմտություններ	ԱլԳ, 6	3	3.37/5	Չնայած իրականացվող ծրագրերին տրված դրական գնահատականին՝ առաջարկվում է շարունակարար գնահատել եղած կրթական ծրագրերի որակն ու արդյունքները, ներառել տեխնոլոգիական կրթական ծրագրեր, առցանց դասընթացներ:	Գնահատվում է հաշվի առնելով հարցումների արդյունքները, նաև անկախ փորձագիտական ուսումնամիջությունը պահանջվող հմտությունների, թթեյնինգների հասանելիության և որակի մասով:
	Նորարարություն	ԱլԳ, 6	1	2.96/5	Դրական է գնահատվում ֆինանսական աջակցությունը էկոհամակարգի տարրեր մասնակիցներին, ինչպես նաև վերջիններիս խրախուսումը: Սակայն, ֆինանսավորումը դեռ սահմանափակ է ոչ տեխնոլոգիական սթարտ-ափերի համար: Նաև թույլ է բիզնես-կրթություն օրական միջմաս կապը:	Գնահատվում է ըստ նորարարությանն օժանդակող ֆինանսական և ոչ ֆինանսական միջոցառումների առկայությամբ:
Համաշխարհային մրցունակության համարիվ 2018	Ինովացիոն և կապի տեխնոլոգիաներ	Աշխարհ 141	59	62/100	Նախորդ տարվա համեմատ այս ցուցանիշն անկում է ապրել երեք կետով: ԱլԳ երկրների շարքում <<ն զիջում է Վրաստանին և Մոլդովային:	Համացնցի և հեռախոսային կապի օգտագործման տարածվածություն և որակ:
	Ինովացիոն էկոհամակարգ	Աշխարհ 141	65	51/100	Այս ենթահամաթվով ԱլԳ երկրների շարքում <<ն զրադեցնում է առաջին տեղը:	Բիզնես դինամիկայի և ինովացիոն կարողությունների միջինացված գնահատական:
	Հմտություններ	Աշխարհ 141	61	66.8/100	Նախորդ տարվա համեմատ ցուցանիշն անկում է ապրել վեց կետով: Արդյունքում <<ն զիջում է Վրաստանին ու Ադրբեյչանին:	Ներառում է անհարժեշտ հմտություններով աշխատակից գտնելու հեշտությունը, թվային տեխնոլոգիաների իմացության մակարդակը, թթեյնինգների որակը, ընտարատական մտածողությունը:
	Ինովացիոն կարողություններ	Աշխարհ 141	62	39.4/100	Այս ենթահամաթվով ԱլԳ երկրների շարքում <<ն զրադեցնում է առաջին տեղը:	Համագործակցային դաշտի, հետազոտությունների, պատեստավորման և առևտարանացման գնահատական:
	Աշխատաշուկայի զարգացվածություն	Աշխարհ 141	35	66.5/100	Չնայած այս ենթահամաթվի մասով <<ն ունեցել է երկու կետով անկում, ԱլԳ երկների շարքում շարունակում է զրադեցնել առաջին տեղը:	Ներառում է աշխատանքային կարգավորումները, աշխատավարձի և աշխատանքի արդյունավետության կապը, աշխատաշուկայի ճկունությունը, համագործակցության մակարդակը:
	Բիզնես դինամիկա	Աշխարհ 141	57	62.5/100	Այս ենթահամաթվով <<ն ունեցել է առաջընթաց հինգ կետով:	Գործառնական պահանջների և ձեռնարկատիրական մշակույթի միջինացված գնահատական է:

	Ձեռնարկատիրական մշակույթ	Աշխարհ 141	47	53.9/100	Այս Ենթահամաթվով նախորդ տարվա համեմատությամբ <<-ն գրանցել է աճ տասնչորս կետով, սակայն զիջում է Աղրբեջանին:	Ձեռնարկատիրական ուսկի հանդեպ վերաբերմունք, նորարարական գաղափարների իրազործման տեմպ, եղած կազմակերպությունների՝ նորարար լուծումների կիրառելու փորձ:
	Մասնագիտական դասընթացների որակ	Աշխարհ 141	86	48.3/100	Այս Ենթահամաթվով <<-ն զիջում է Ուկրաինային և Աղրբեջանին:	Աշխատուժ համարվի մաս է, բնութագրում է վերապատրաստման դասընթացների արդյունավետությունը:
	Անհրաժեշտ հմտություններով աշխատուժի առկայություն	Աշխարհ 141	85	50.5/100	Այս Ենթահամաթվով հետ ենք մնում Ուկրաինային և Աղրբեջանից:	Այս ցուցանիշը բնութագրում է, թե կազմակերպությունների համար որքանով է մատչելի իրենց անհրաժեշտ մասնագիտական հմտություններով աշխատակից գտնելը:
	Տեղական մրցակցություն	Աշխարհ 141	24	63/100	Ենթահամաթվով <<-ն բավական առաջատար դիրք է գրանցնում՝ տարածաշրջանում զիջելով միայն Աղրբեջանին:	Այս համարիվը բնութագրում է մրցակցությունը ծառայությունների, կապի, մասնագիտական ծառայությունների և առևտությունների:
Գլոբալ ձեռներեցության համարիվ 2018	Ձեռներեցություն	Աշխարհ 137	88	22.8/100	Այս համաթվով տարածաշրջանում <<-ն առաջ է միայն Մոլդովայից:	Ներառում է կրթական և ֆինանսական համակարգերը, շուկայի կառուցվածքն ու ենթակառուցվածքները
Շուկաների հասանելիություն						
SME Policy Index 2020	ՓՄՁ-ների միջազգայնացում	ԱլԳ, 6	2	2.86/5	Որպես հիմնական խնդիրներ մնում են հարկային և մաքսային վարչարարությունն և դրա ոչ բավարար համապատասխանությունը համաշխարհային արժեշոշակի:	Արտահանումը խրախուսող և աջակցող կառուցների առկայությունը, համաշխարհային արժեշոշակի հետ կապ:
Համաշխարհային մրցունակության համարիվ 2018	Շուկաների հասանելիության աստիճան	Աշխարհ 141	84	55.2/100	Այս Ենթահամաթվով <<-ն բավական հետ է և ԱլԳ երկրների շարքում գրանցնում է վերջին տեղը:	Մարսագերծման գործընթացի պարզություն, տարիքների և մարսատուրերի մակարդակ
Ինստիտուցիոնալ և իրավական կարգավորումներ						
SME Policy Index 2020	Սնանկացում և երկրորդ հնարավորություն	ԱլԳ, 6	1	2.40/5	Թույլ կողմեր են համարվում վերակազմավորման և առողջացման կարգավորման բացակայությունը, միջազգային ստանդարտներին ոչ ամբողջական համապատասխանությունը, պարտատերերի շահերի պաշտպանության ցածր մակարդակը, երկրորդ անգամ բիզնես սկսելու դեպքում աջակցման մեխանիզմների սահմանափակումները:	Պրոցեսի ժամանակատարության մասով սնանկացող բիզնեսի առողջացման հնարավորության :
	ՓՄՁ քաղաքականության մշակման ինստիտուցիոնալ կարգավորման շրջանակ	ԱլԳ, 6	3	3.76/5	Այս Ենթահամաթվով <<-ն արձանագրել է աճ 2016 թվականի նկատմամբ՝ պայմանավորված ինստիտուցիոնալ և օրենսդրական դաշտի դրական տեղաշարժերով:	Բնութագրում է ՓՄՁ զարգացման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ, օրենսդրական և ուղղմավարական բարեփոխումների իրականացումը:

	Գործարար միջավայր ՓՄՁ-ների համար	Ալֆ, 6	3	3.57/5	Այս ենթահամաթվով <<-ն հետընթաց է գրանցել՝ պայմանավորված պետական ծառայությունների էլեկտրոնային աշխատանքի որակով և հասանելի տվյալների բազայի սահմանափակմամբ:	Բիզնես գրանցելու և վարելու գործընթացում եղած լուծումների հասանելիություն:
	Աջակցության ծառայություններ	Ալֆ, 6	1	4.00/5	Դրական է գնահատվում ներքին շուկայում բիզնեսի աջակցման՝ մասնավոր և պետական կառուցների գործունեությունը, միջազգային դրույների ներգրավվածությունը:	Ենթակառուցվածքների և օժանդակող ծառայությունների մասով հարցման արդյունքներ:
	Պետական գնումներ	Ալֆ, 6	2	3.61/5	Առաջարկվում է բանակցությունների ժամանակ ներառել անկախ փորձագետներ, ինչպես նաև ավելացնել նոր բազային չափանիշներ՝ բացի ամենացածր գնից:	Գնահատում է ընթացակարգը, մոնիթորինգի և արդյունքների գնահատման մեխանիզմները:
	Ստանդարտներ և տեխնիկական կարգավորումներ	Ալֆ, 6	4	2.66/5	Այս ենթահամաթվով <<-ն բավական անկում է ունեցել՝ պայմանավորված միջազգային ճանաչման և գնահատման համաձայնագրերին <<-ի մասնակցության ցածր ցուցանիշով ու պասիվությամբ :	Հիմնականում հարցման արդյունքների միջոցով որոշվում է եղած կարգավորումների մոնիթորինգային և գնահատման համակարգերի արդյունավետությունը:
	ՓՄՁ-ները «կանաչ» տնտեսության մեջ	Ալֆ, 6	2	2.40/5	Որպես իմնական խնդիր նշվում է առկա կարգավորումների մասին ձեռներեցների մոտ տեղեկացվածության պակասը :	Գնահատում է խրախուսող մեխանիզմների առկայությունը և արդյունավեր իրականացումը:
Համաշխարհային մրցունակության համարիվ 2018	Մակրոտնտեսական կայունություն	Աշխարհ 141	64	75/100	Այս ենթահամաթվով Ալֆ երկրների շարքում <<-ն գրանցվում է առաջին տեղում:	Ինֆյաշիայի և պետական պարտքի դինամիկա:
	Սնանկության համակարգի կարգավորում	Աշխարհ 141	98	46.9/100	Այս ենթահամաթվով <<-ն զգալիորեն հետ է մնում Ալֆ երկրներից:	Արդյունավետ կարգավորում, որը կազմակերպության առողջացման կամ վերակառուցման հնարավորություն է տալիս :
	Սնանկությունից առողջացման մակարդակ	Աշխարհ 141	68	41.1/100	Այս ենթահամաթվով Ալֆ երկրների շարքում <<-ն գիշում է Վրաստանին և Աղոքեցանին :	Սնանկության գործընթացում վերակազմավորված և առողջացած կազմակերպությունների մակարդակ:
Ներառական զարգացման համարիվ 2017	Փոքր բիզնեսի սեփականատիրություն	Ցածր-միջին եկամուտ ունեցող երկրներ 37	2	4.43/7	Ձեռներեցնություն համարվի ենթահամաթիվ	Իր մեջ ամփոփում է բիզնես սկսելու և իրականացնելու իրավական և հարկային կարգավորումների բարդությունը:



EU4Business



Implemented by:
GIZ
Gesellschaft für Internationale
Zusammenarbeit (GIZ) GmbH

Սույն ռազմավարությունը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում ՀՀ կառավարությունը, և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԴԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 2
 ՀՀ կառավարության 2020 թվականի
 օգոստոսի 27-ի N 1443 - Լ որոշման

Ռազմավարության գործողությունների պլան

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կառավարմարմին	Ժամկետ	Բյուջե			Ֆին. Աղբյուր			
					2020	2021	2022	Պետ Բյուջե 2020	Պետ Բյուջե 2021	Պետ Բյուջե 2022	Այլ
					2,551	3,931	2,292	933	1,003	1,752	5,086
	1 Ֆինանսական ռեսուրսների հասանելիություն ավելացում				1,617	2,511	1,791	862	887	1,691	2,479
1.1	ՓՄՁ Պետական աջակցության գործիքակազմի արդյունավետության և ծածկույթ ընդլայնում				1,585	2,356	1,678	835	856	1,668	2,260
1.1.1	Երաշխավորությունների հիմնադրամի դրամագլխի ավելացում	Նորաստեղծ ՓՄՁ-ներ, Նորարար ՓՄՁ-ների վարկավորում	ԷՆ	Դեկտեմբեր 2020	750	750	1500	750	750	1500	
1.1.2	Բանկային համակարգի հետ ոհսկերը կիսելու եղանակով ՓՄՁ վարկավորման գործիքի ներդնում	Շահառուների քանակ	ԷՆ	Մայիս 2021	-	-	-	-	-	-	-

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Բյուջե			Ֆին. Աղբյուր			
					2020	2021	2022	Պետ Բյուջե 2020	Պետ Բյուջե 2021	Պետ Բյուջե 2022	Այլ
1.1.3	Գործող ՓՄՁ-ների նորարարական նախագծերի ֆինանսական աջակցության գործիքի մշակում, քննարկում շահառուների և ֆինանսական շուկայի ներկայացուցիչների հետ	Գործիքի առկայություն	ԷՆ, ԿԲ	Նոյեմբեր 2020	-	-	-	-	-	-	-
1.1.4	Գործող ՓՄՁ-ների նորարարական նախագծերի ֆինանսական աջակցության գործիքի ներդրում	Շահառուների քանակ	ԷՆ, ԿԲ	Ապրիլ 2021	750	1,500	-	-	-	-	2,250
1.1.5	Սկսնակ ձեռնարկատեր ծրագրի իրականացում	Շահառուների քանակ	ԷՆ	Շարունակական	70	100	162	70	100	162	
1.1.6	ՓՄՁ վարկերի պորտֆելի հիման վրա ակտիվներով ապահոված արժեթղթերի թողարկումների խրախուսում, Սփյուռքում դրանց նկատմամբ պահանջարկի հնարավորությունների գնահատում՝ անհրաժեշտության դեպքում մասնավոր ներդրումային ֆոնդերի հետ համագործակցելով:		ԷՆ, ԿԲ	Հունիս 2022			10				10

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Բյուջե			Ֆին. Աղբյուր			
					2020	2021	2022	Պետ Բյուջե 2020	Պետ Բյուջե 2021	Պետ Բյուջե 2022	Այլ
1.1.7	Ստեղծել և շահագործել/առաջմղել հարթակ, որտեղ ներկայացված կլինիկ ՓՄՁ ֆինանսավորման բոլոր հանրային, ինչպես նաև այլ (դոնոր, ՀԿ) գործիքները և մեխանիզմները	Հարթակի առկայություն	ԷՆ	Հարթակ - Նոյեմբեր 2020 Շահագործումը - շարունակական	15	6	6	15	6	6	
1.2	Անշարժ գույքին այլընտրանքային գրավի կիրառությանը առնչվող օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի զարգացում				8	19	0	8	5	0	14
1.2.1	Ակտիվների հիմքով ֆինանսավորման (ֆակտորինգ, առևտորի ֆինանսավորում) կիրառության համար նպաստավոր միջավայրի (այդ թվում օրենսդրական) խոչընդոտների դուրս բերում		ԷՆ, ԿԲ	Հունիս 2021		8		-	-		8
1.2.2	Մշակել միջոցառումների ծրագիր ակտիվների հիմքով ֆինանսական գործիքների մատչելիության և կիրառելիության բարձրացման համար	Ծրագրի հաստատում	ԷՆ, ԿԲ	Դեկտեմբեր 2021		5		-	5		-

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Բյուջե			Ֆին. Աղբյուր			
					2020	2021	2022	Պետ Բյուջե 2020	Պետ Բյուջե 2021	Պետ Բյուջե 2022	Այլ
1.2.3	ՓՄՁ-ների շրջանում լիզինգային գործիքի վերաբերյալ իրազեկման միջոցառումներ		ԷՆ	Դեկտմբեր 2020	8	4		8			4
1.2.4	Լիզինգային ընկերությունների համար հարկային արտոնության նպատակահարմարության գնահատում		ԷՆ,ԿԲ	Հունիս 2021		2		-	-		2
1.3	Ֆինանսական գրագիտության բարձրացում և թափանցիկ գործարության մշակույթի զարգացում				19	106	103	19	26	23	160
1.3.1	Կրթական և իրազեկման միջոցառումներ		ԷՆ	Շարունակական	7	13	20	7	13	20	-
1.3.2	Ֆինանսական կառավարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման թրեյնինգների մշակում և թվայնացում	Դասընթացների ծրագիրը մշակված է, մատչելի նյութերը թվային տեսքով հասանելի են	ԷՆ	Դեկտեմբեր 2020	12			12	-		
1.3.3	ՖՀՄՍ-ի համապատասխան հաշվետվությունների պատրաստման կարողությունների ձևավորում ինչպես սուբյեկտների, այդպես էլ ԲՀԾ ների մոտ	Իրականացված թրեյնինգների քանակ/թրեյնինգ ներին մասնակիցների	ԷՆ	Շարունակական		5	3	-	5	3	

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կառավարող մարմին	Ժամկետ	Բյուջե			Ֆին. Աղբյուր			
					2020	2021	2022	Պետ Բյուջե 2020	Պետ Բյուջե 2021	Պետ Բյուջե 2022	Այլ
		ընդհանուր քանակ									
1.3.4	ՓՄՁ շրջանում պատասխանատու թափանցիկ բիզնեսի կազմակերպման և կորպորատիվ կառավարման սկզբունքների կիրառման խրախուսման քաղաքականության մշակում՝ ներառյալ իրազեկումը	Քաղաքականության ներկայացում	ԷՆ	Հունիս 2021		8	-	8			-
1.3.5	ՓՄՁ գնահատման մեթոդաբանության մշակում (օր. Սքորինգ) և ֆինանսական հաստատությունների կողմից այն կիրառելու կարողությունները ձևավորում		ԷՆ, ԿԲ	Մարտ 2022		10	30	-			40

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Բյուջե			Ֆին. Աղբյուր				
					2020	2021	2022	Պետ Բյուջե 2020	Պետ Բյուջե 2021	Պետ Բյուջե 2022	Այլ	
1.3.6	Ֆինանսական ոլորտի աշխատակիցների վերապատրաստումներ՝ ՓՄՁ-ների գնահատման կարողությունների զարգացմանն ուղված	Կազմակերպված թրեյնինգների/ վերապատրաստ ումների քանակ/մասնակիցների ընդհանուր քանակ	ԷՆ	Շարունակական		70	50	-				120
1.4	Ֆինանսական շուկայի դիվերսիֆիկացիայի համար բարենպաստ պայմանների ստեղծում՝ ներդրումային/վենչուրային հիմնադրամներ, բիզնես-հրեշտակներ, այլընտրանքային ֆինանսավորման գործիքներ			0	20	5	0	0	0	0	25	
1.4.1	Ուսումնասիրել ներդրումնային ֆոնդերի և բիզնես-հրեշտակների կայացման համար օրենսդրական խոչընդոտները/կազմակերպել քննարկում-հանդիպումներ շահագործիո կողմերի հետ	Բազմակողմանի ուսումնասիրություն	ԷՆ, ԲՏԱՆ, ԿԲ	Դեկտեմբեր 2021		5		-	-		5	

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Բյուջե			Ֆին. Աղբյուր			
					2020	2021	2022	Պետ Բյուջե 2020	Պետ Բյուջե 2021	Պետ Բյուջե 2022	Այլ
1.4.2	Անհրաժեշտության դեպքում մշակել ներդրումնային ֆոնդերի և բիզնես-հրեշտակների կայացմանը նպաստող օրենսդրական բարեփոխումների փաթեթ	Օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների փաթեթը շրջանառվել է	ԷՆ, ԿԲ	Դեկտեմբեր 2022	-	-	-	-	-	-	-
1.4.3	Կապիտալում մասնակցությամբ զանգվածային ֆինանսավորման (crowdfunding) ենթաօրենսդրական դաշտի ստեղծում, անհրաժեշտության դեպքում օրենսդրական ակտերի մշակում	Ենթաօրենսդրական (անհրաժեշտության դեպքում օրենսդրական) փաթեթը շրջանառվել է	ԿԲ, ԷՆ	Մարտ 2022	-	-	-	-	-	-	-
1.4.4	Հանրային գրանտների օրենսդրության բացերի բացահայտում և անհրաժեշտ փոփոխությունների նախաձեռնում		ԷՆ,	Մարտ 2021	-	-	-	-	-	-	-
1.4.5	Այլնտրանքային ֆինանսավորման գործիքների կիրառության վերաբերյալ իրազեկման միջոցառումներ Բիզնեսի աջակցման կառուցների և Ասոցիացիաների միջոցով		ԷՆ	Շարունակելի		10	5	-			15

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Բյուջե			Ֆին. Աղբյուր			
					2020	2021	2022	Պետ Բյուջե 2020	Պետ Բյուջե 2021	Պետ Բյուջե 2022	Այլ
1.4.6	Ֆիզիկական անձանց դրամական փոխանցումները ներդրումների տրանսֆորմացնելու պիլոտային ծրագրի մշակում	Գնահատվել է գործիքի նպատակահարմարությունը և մշակվել է պիլոտային ծրագիր	ԷՆ, ԿԲ	Սեպտեմբեր 2021		5		-	-		5
1.4.7	Վենչուրային հիմնադրամների և բիզնես-հրեշտակների հետ շարունակական կապի պահպանում իրենց աշխատանքը ակտիվացնելու նպատակով. այդ թվում՝ բանակցություններ պետության հնարավոր փայամասնակցության վերաբերյալ:	Վենչուրային հիմնադրամների պորտֆել	ԲՏԱՆ, ԷՆ	Շարունակական		-	-	-	-		-
1.5	Մասնկության համակարգի բարեփոխում				5	10	5	0	0	0	20

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Բյուջե			Ֆին. Աղբյուր			
					2020	2021	2022	Պետ Բյուջե 2020	Պետ Բյուջե 2021	Պետ Բյուջե 2022	Այլ
1.5.1	Մասնակցություն գործարար միջավայրի բարելավման ծրագրով սնանկության համակարգի բարեփոխումների համար սահմանված միջոցառումների մշակմանը, իրականացմանը և գնահատմանը և ՓՄՁ ոլորտի պահանջների ներառման ապահովումը նշված ծրագրի մեջ. մասնավորապես արագացված ընթացակարգի առկայությունը և վերակառուցման հնարավորությունների ընդլայնումը	SBA ,Առողջացմամբ ավարտվող վարույթների տեսակարար կշիռը,	ԷՆ	Հունիս 2021	-	-	-	-	-	-	-
1.5.2	Մասնակցություն սնանկության կառավարիչների մոտիվացիոն այնպիսի մեխանիզմների մշակմանը և ներդրմանը, որոնք շահագրգոռում են ՓՄՁ սնանկության վարույթը ավարտել ֆինանսական առողջացմամբ:	Արտադատական գործընթացների կշիռը ընդհանուրի մեջ	ԷՆ	Դեկտեմբեր 2022		5	5				10

NN ը/կ	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարող մարմին	Ժամկետ	Բյուջե			Ֆին. Աղբյուր				
					2020	2021	2022	Պետ Բյուջե 2020	Պետ Բյուջե 2021	Պետ Բյուջե 2022	Այլ	
1.5.3	Սնանկության գործընթացին հաջորդող երկրորդ հնարավորության քոռizինգի գործիքի մշակում (Հասարակական կազմակերխությունների հետ համատեղ)	Մշակված Գործիք	ԷՆ	Դեկտեմբեր 2021	5	5	-	-	-		10	
2 ՓՄՁ սուբյեկտների կարողությունների զարգացում և ձեռնարկատիրական մշակույթի խթանում					245	629	388	55	75	51	1081	
2.1	Նորարարության ներդնումը և կիրառումը թիրախավորող աջակցության գործիքակազմի մշակում և ներդնում պետական աջակցության կառուցների միջոցով					20	237	220	0	2	0	475
2.1.1	Միասնական օգտագործման տեխնոլոգիական կենտրոնների պիլտ ծրագրի իրականացում	Մշակվել է կենսունակ ծրագիր	ԷՆ	Հուլիս 2021	-	-	-	-	-		-	
2.1.2	Տեխնոլոգիական խորհրդատվության և առողջիսի (այդ թվում միջազգային փորձագետների միջոցով) ծրագրի մշակում և ներդնում	Շահառուների քանակ	ԷՆ	Շարունակական		20	20	-	-		40	

